

Accademia nazionale delle Scienze della Repubblica d'Armenia

**DOCUMENTI DELL'ARCHIVIO STORICO DIPLOMATICO  
DEL MINISTERO DEGLI AFFARI ESTERI D'ITALIA  
SULLA QUESTIONE ARMENA  
NEGLI ANNI 1913-1923**

**VOLUME 1 1913-1917**

Raccolta del materiale, traduzione e prefazione a cura di  
**Aramayis Baloyan**

Jerevan 2008

Museo-istituto del Genocidio armeno

**ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ  
ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ  
1913-1923թթ.**

**ՀԱՏՈՐ Ա 1913-1917**

Նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց,  
առաջաբանը գրեց և հրատարակության դասրաստեց՝  
**Արամայիս Բալոյանը**

Երևան 2008



Մեծագրությունը երաժիշակվորվել է հրատարակման  
Հայոց ցեղաստանության թանգարան-ինստիտուտի  
գիտական խորհրդի կողմից

Փաստաթղթերի տպագրությունը թույլատրված է  
Իսպիայի արևաին գործերի նախարարության  
դասմական դիվանագիտական արխիվի  
սնօրինության կողմից

La pubblicazione del volume  
e' autorizzata  
dal Consiglio scientifico  
del Museo-Istituto  
del Genocidio armeno

La pubblicazione dei documenti  
e' autorizzata  
dall'Archivio storico diplomatico  
del Ministero degli affari esteri  
d'Italia

ՀՏԴ 941 (479, 25): 327  
ՊՄԴ 63.3 (27)+66.4  
Բ 209

Բաղյան Արամայիս  
Բ 209 Իսպիայի Արևաին գործերի նախարարության դասմական դիվանագիտական  
արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923թթ. Հասոր Ա. – Եր.: Հայոց  
ցեղաստանության թանգարան-ինստիտուտ, 2008. – 252 էջ:

Խմբագիրներ. Է. Դանեղյան, Գ. Դեմոյան, Ս. Սամուկյան  
Եւրոի հայեցակարգ. Գ. Դեմոյան, Է. Դանեղյան, Գ. Սամուկյան  
զրաֆիկական նախագիտում. Գ. Սամուկյան  
էջադրում. Ա. Հարությունյան

ՊՄԴ 63.3 (27)+66.4

ISBN 978-99941-963-6-4

© Հայոց ցեղաստանության թանգարան-ինստիտուտ, հայերեն թարգմանություն, 2008

© Արամայիս Բաղյան, հայերեն թարգմանություն, 2008

տպագրություն. Տիգրան Մեծ հրատարակչություն ՍՊԸ

Հայկական հարցում եվրոպական սերությունների ֆաղափականության գիսական ուսումնասիրությունը եղել և մնում է ֆաղափական հայագիտության կարևորագույն ոլորտներից մեկը: Վերջին սասնամյակների ընթացքում զգալի ափսասանք է սարվել այս ուղղությամբ՝ ինչդեռ Հայաստանում, այնդեռ էլ սարքեր երկրներում: Տղագրվել են բազմաթիվ գիսական ուսումնասիրություններ և մենագրություններ, որոնք նվիրված են եղել 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Հայկական հարցի վերաբերյալ սերությունների ֆաղափականությանը: Մեծ արժեք են ներկայացնում նաև եվրոպական սերությունների տաճոնական փաստաթղթերի և դիվանագիսական նամակագրության ժողովածուները, որոնք կարևոր աղբյուր են հանդիսանում ինչդեռ այդ սերությունների ֆաղափականության, այնդեռ էլ՝ 1894-96, 1909, 1915-16 թթ. հայկական կոտորածների և սեղահանության, ետղաստերազնական միջազգային ֆննարկումների, նաև՝ 1918-20 թթ. Հայաստանի անկախության Երջանի լուսաբանման և ուսումնասիրման համար:

Այս իմաստով մեծ հետաբրություն է ներկայացնում եվրոպական սերություններից մեկի՝ Իսալիայի ֆաղափականության ուսումնասիրությունը: Հայկական հարցն այդ դեռության արսափն ֆաղափականության ոլորտ է մեել 1877-78 թթ. ռուսթուրֆական տղստերազմից և 1878 թ. Սան-Ստեֆանոյի տղյամնագրի կնոմից հետո, ուր, ինչդեռ հայսնի է, առաջին անգամ Հայկական հարցն իր արսացոլումն է գեել ուղդեռ միջազգային դիվանագիտության հարց: Պղստերազմում Օսմանյան կայսրության տղարսությունն այդ կայսրության ֆայֆայման տղառնալիք էր ստեղծում, որի արղյունոմ Իսալիան կարող էր գրկվել

Միջերկրական ծովի Երջակայքում իր առավելություններից, եթե սերություններից որևէ մեկն իր ազդեցությունն ուժեղացնել կամ հաստատեա Բալկանյան թերակղզում: Այդ իսկ լուսաճառով Իսալիան դեմ էր արտահայտվում Սան Սեֆանոյի լուսամանագրին, սակայն միաժամանակ գերծ էր մնում հակառուսական խմբավորման մեջ մտնելուց:

1878 թ. Բեռլինի համաժողովի նախօրյակին եվրոպական առաջին մայրաքաղաքը, ուր այցելել էր Մկրտչի Խրիմյանի գլխավորած հայ ազգային լուսավիճակությունը, Հոման էր: Ինչդեռ հայտնի է՝ 1878 թ. մարտի 27-ին լուսավիճակության ընդունել էր Իսալիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը՝ արտգործնախարար Լուիջի Կորսին, որը, ինչդեռ լուսավել էր հանդիման ժամանակ, բավականին աղոտ լուսակերպում ուներ հայերի լուսահանջախրության մասին: Համալուսասալիան լուսաբանումներ ստանալուց և ներկայացված փաստաթղթերին ծանոթանալուց հետո Կորսին ընդհանուր արտահայտություններով խոստացել էր լուսաբանել հայերի լուսահանջները: Իսկ երբ Բեռլինի համաժողովի երկրորդ նիստում որոշվեց, որ առանց սերությունների որևէ մեկի լուսաբան ներկայացուցչի միջնորդության նմանակման չի դրվի որևէ դիմում կամ գեկուցագիր, հայկական լուսավիճակությունը հունիսի 25-ին իսալական լուսավիճակության ղեկավար Կորսինին հանձնեց իր խնդրագիրը, Հայաստանի ինքնավարության ծրագիրը և վիճակագրական սլյալներ՝ Թուրքիայի հայկական նահանգների մասին: Սակայն այդ փաստաթղթերն ուժաղության չարժանացան: Սերություններից և ոչ մեկը, այդ թվում՝ Իսալիան, չդնդեց, որդեսգի Հայկական հարցը մսցվի համաժողովի օրակարգ: Այդուհանդերձ՝ հետագայում իսալական կառավարությունը մասնակցեց Արմսյան Հայաստանի բարենորոգումների իրականացումը լուսահանջող սերությունների համատեղ գործողություններին: Մասնավորադեռ, Օսմանյան կայսրությունում Իսալիայի դեսալանը սորագրեց 1880 թ. հուլիսի 2-ին և սեդեսմբերի 11-ին մեծ սերությունների կողմից սուլթանական կառավարությանը ներկայացված հայտագրերը:

1890-ական թթ. կեսերին, Հայկական հարցի սրման լուսահին, իսալական կառավարությունը սուլթանից լուսահանջեց իրագործել հայկական բարենորոգումների ծրագիրը, աղահովել Օսմանյան կայսրության քիսոնյանների կյանքի անվսանգությունը

և եվրոպական մյուս սերությունների հետ համատեղ ֆայլեր ձեռնարկեց հայերի նոր ջարդեր թույլ չհատու ուղղությամբ: Հիշատակեմք, որ 1896 թ. նոյեմբերին Արդուլ Համիդ 2-րդն ընդունեց իսլամական դեստանդոդ Պանսային: Վերջինս համառոտեմ փորձում էր համոզել սուլթանին, որ կայսրությունում կարգուկանոնը վերականգնելու միակ միջոցը հայկական բարենորոգումներին ընթացք տալն է: Հավելեմք, որ 1895-96 թթ. Իսալիայի կառավարությունը ֆանիցս իր դեստանին հորդորել է համատեղ ֆայլերի դիմել եվրոպական մյուս երկրների հետ Հայկական հարցում:

Հեսագայում՝ 1912-14 թթ., հայկական բարենորոգումների հարցի ֆննարկման ժամանակ Իսալիան՝ դաշտագնելով իր դաշտակիցներին՝ Գերմանիային և Ավստրո-Հունգարիային (ինչպես հայտնի է՝ 1882 թ.-ից Իսալիան հարել էր ավստրո-գերմանական դաշինքին), հիմնականում հանդես էր գալիս բարենորոգումների ռուսական նախագծի դեմ, մերժելով՝ վեց վիլայեթներից հայկական միասնական մարզ ստեղծելու գաղափարը և ղրդելով՝ ֆննարկման հիմնում դնել թուրքական նախագիծը:

Հայտնի է, որ Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստանությունը և կայսրության արևելյան նահանգների ֆաղաֆնեում հավասարմագրված իսլամական հյուղասոսությունները կանոնավոր կերպով իրենց կառավարությանը սեղեկագրել են հայ բնակչության կոստանդնուպոլսի սեղահանության մասին: Այդուհանդերձ Իսալիայի կառավարությունը, Հայկական հարցում մշտադես ողղեգրելով զգուցավոր դիրքոցում, լուրջ ֆայլեր չձեռնարկեց իր բողոքն արտահայտելու երիթոսրքական կառավարության հանցավոր ֆաղաֆականության դեմ:

Ինչպես հայտնի է՝ 1915 թ. մայիսին Իսալիան դաշտագրմ հայտարարեց Գերմանիային, և Անսանսայի երկրները Իսալիայի հետ կնեցին համաձայնագիր, ուր հաշվի էր առնված իսլամական դաշտանցաթրությունը Թուրքիայի որոց սարածֆների նկատմամբ: Արդյունում՝ 1916 թ. Սայֆ-Պիկոյի համաձայնագրում հայտնվեց «կանաչ» գոտին (Հարավ-Արևմտյան Անատոլիա) և «Ը» գոտին (Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի մի մասը), որոնք ձանաչվում էին Իսալիայի ազդեցության ոլորտ:

Հայտնի է նաև, որ 1919 թ. փետրարին Իսալիայի վարչադես Վիսնոդո Օռլանդոն համաձայնեց Մեծ Բրիտանիայի առաջարկությանը՝ «օրինականություն և կարգուկանոն հաստատելու հա-

մար» իսլալական 2 դիվիզիա ուղարկել Հայաստան: Բայց նրա կառավարության անկումից հետո նոր վարչապետ Ֆրանչեսկո Նիսսին հրաժարվեց այդ գաղափարից: Հեռագայում, 1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսում Նիսսին հանդես եկավ Թուրքիայի հանդեպ «ավելի մեղմ» վերաբերմունքի օգտին և դեմ արտահայտվեց Հայաստանի Հանրապետության սահմանը Թուրքիայի հասցված ընդարձակելուն և դեղի Սև ծով նրան ելք սրամաղդելուն: Իսլալիան ստորագրեց Սևրի դաճնագիրը, սակայն վարչապետը սկզբից ևեթ հայտարարեց, որ այն իրագործելու համար իսլալական կառավարությունը զինվոր չի սրամաղդելու: Նշենք նաև, որ 1918-20 թթ. Իսլալիայի արագործնախարարի լիազոր ներկայացուցիչը Թիֆլիսում և Երևանում համակարգում էր Հայաստանի Հանրապետությանն ու արևմտահայ փախսականներին ցուցաբերվող իսլալական օգնության աշխատանքները:

Վերոնշյալ իրողությունները լուրջ դրվագներ են Հայկական հարցում Իսլալիայի ֆաղափականության, որը դեռևս լուրջ և մանրակրկիտ ուսումնասիրության ու լուսաբանման կարիք ունի: Այս իմաստով Իսլալիայում ՀՀ դեստանության միջոնորոշյամբ և Իսլալիայի արտաքին գործերի նախարարության թույլտվությամբ Արամայիս Բալոյանի կողմից Իսլալիայի ԱԳՆ տասնական դիվանագիտական արխիվում կատարած աշխատանքի արդյունքում կյանքի կոչված այս ժողովածուն չափազանց մեծ արժեք ունի: Արամայիս Բալոյանը սարհների ջանադիր հեսետողականությամբ հիշյալ արխիվից հայտնաբերել, դասակարգել և թարգմանել է 1913-23 թթ. Երջանի Հայաստանի և Հայկական հարցին վերաբերող դիվանագիտական կարևոր վավերագրեր, որոնք, փաստորեն, առաջին անգամ են դրվում գիտական, մասնավորապես, ցեղաստղանագիտական Երջանառության մեջ: Ժողովածուի առաջին հատում զեեսեղված են 1913-17 թթ. վերաբերող 225, ինչդես նաև, որդես հավելված, Աղանայի կոսորածին առնչվող 20 վավերագրեր, որոնք այժմեական ֆաղաղափական կարևոր նեանակություն ունեն:

*Արման Կիրակոսյան*

Պասմական գիտությունների դոկտոր

Ինչդեռ հայսնի է՝ առաջին համաեխարհային դասերագմի նախօրյակին եվրոպական սերությունները դարձյալ իրենց արտաքին ֆադաֆականության մաս դարձրին Օսմանյան կայսրության հայաբնակ Երջաններում բարեփոխումներ անցկացնելու անհրաժեհության հարցը: Հայսնի է նաև, որ Ռուսասանը ցանկանում էր միայնակ զբաղվել այս խնդրով՝ առանց որևէ եվրոպական սերության ներգրավվածության, սակայն, օսմանյան կառավարությունը սեղի սալով ռուսական ճնշումներին և խոսանալով այդ ուղղությամբ ֆայլեր ձեռնարկել, այսուհանդերձ բարեփոխումների ծրագիրը համասեղ մակակելու և իրականացնելու խնդրանքով դիմեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին հեհկյալ նկասառումներով: Չնայած երկիրն ամբողջությամբ զհնվում էր եվրոպական երկրների ազդեցության սակ, այսուհանդերձ թուրֆական կառավարությունը փորձում էր հայկական Երջաններում բարեփոխումներ անցկացնելու հարցում որևէ երկրին մենաճնորհ չհալ, ֆաջ զհսակցելով, որ երբ մի ֆանի գերսերություն են միաժամանակ զբաղվում այդ հարցով, ադա խնդրի լուծման ընթացքում այդ երկրների միջև սեփական ճահերի բախումն այն ասիճանի է հասնում, որ մեծավ մասամբ ձախողվում է կոնկրեհ ֆայլերի իրագործումը, հանգամանք, որը ավելի ֆան ցանկալի էր Թուրքիայի համար՝ հայկական բարեփոխումների դարագայում: Սսեղծված իրավիճակում, բնական է՝ Ռուսասանն այլևս չէր կարող միայնակ բանակցել Թուրքիայի հեհ և հարաբերությունները եվրոպական երկրների հեհ չարելու համար դիմեց Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Բեռլինի և Հռոմի իր դեսդաններին, որդեսզի նրանք դարզեն սերությունների դիրոռոճումն ու հեհաֆրությունը բարեփոխումների հարցում:

Ռուսաստանի նախաձեռնությամբ 1912թ. վերջից սկսված այս գործընթացը բավականին հեռաբխի զարգացումներ ունեցավ՝ ամբողջությամբ ի ցույց դնելով Օսմանյան կայսրության հեռառնչվող եվրոպական տնտեսությունների ֆաղափարականությունը: Ջնապարհված երկու խմբավորումները՝ Եռյակ համաձայնությունը և Եռյակ դաշինքը (որոնցից առաջինի կազմի մեջ ինչդեպ հայտնի է մտնում էին Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, իսկ երկրորդի մեջ՝ Պերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան), ունենալով ընդհանուր ցահեր, այդուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրն իր սեփական երկրի ցահերն էր հեռադրող: Այդ ցահերն առավել ընդգծված էին ի հայտ գալիս հենց այն ժամանակաշրջանում, երբ ողջ Արևելքում ընթանում էր այդ տնտեսությունների հեռաբխությունների և ազդեցությունների ոլորտների վերաձևումը:

Միջազգային հարաբերությունների ահա այսդիսի մթնոլորտում էին ընթանում հայկական բարեփոխումների ծրագրի մշակման շուրջ բանակցությունները, որոնք, ինչդեպ հայտնի է, ավարտվեցին 1914թ. փետրվարի 8-ի դայմանագրով, որով օսմանյան կառավարությունը դարձավ իրավապահ իրականացնել կայսրության հայաբնակ շրջաններում:

Այսուհանդերձ, սկսված համաեվրոպական հակամարտությունը ի չիք դարձեց բարեփոխումների ծրագրի իրականացումը, և երիտթուրքական կառավարությունը, օգտվելով դասերազմի ընձեռած հնարավորություններից, յուրովի լուծեց Հայկական հարցը՝ քնաջնջելով և տեղահանելով Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությանը:

Այս խնդիրը բավական ուսումնասիրված է. գրվել են բազմաթիվ աշխատություններ, հրատարակվել և հայերեն են թարգմանվել Հայկական հարցին առնչվող եվրոպական մի շարք երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Պերմանիայի, Ավստրիայի և Ռուսաստանի դիվանագիտական փաստաթղթերը: Իտալիան ժամանակի միակ գերտնտեսությունն է. որի արխիվներում դաստիարակվող Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերը մինչ վերջին ժամանակները, որոշ բացառություններով, համարյա անհայտ էին հայ հանրությանը:

1990-ականների վերջին Ֆլորենցիայում կազմվեց մի հանձնաժողով, որը սկսեց ուսումնասիրել և հրատարակել Հայաստան

մին առնչվող իսպալական դիվանագիստության փաստաթղթերը: Անգնահատելի այս աշխատանքի արդյունքում իսպալեռնով արդեն ընթերցողին են հանձնվել 1891-1899 թվականների արխիվային նյութերը, որոնք մոտ լույս են սփռում արքայազն-միդյան վարչակարգի կողմից հայ ժողովրդի հանդեպ վարվող քաղաքականության, այդ խնդրում եվրոպական տերությունների և, մասնավորապես, Իսպալիայի կառավարության դիրքորոշման վրա: Հիշյալ փաստաթղթերն ամփոփված են հինգ հատորներում, որոնց կազմող-հեղինակներն են Մարցիո Ռուսոն, Լաուրա Լուսինարին, Լորենցո Մեֆին, Սալվատորե Մոլացիալեն և Մարկո Բայզը:

1913-1923 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը Հայկական հարցի դասմության կարևորագույն ժամանակներից է, քանզի այն 1912թ. վերջից միջազգային հարաբերություններում մոտ թափ ստանալով և 1923թ. Լոզանի դաշմանագրով վերջնականապես թաղվելով, այսօր այդ խնդրի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին բազմաթիվ հարցեր է առաջադրել, որոնք սակավին ուսումնասիրության դասանջ ունեն:

Խնդրո առարկա մի շարք հարցերի դասասխանները կարող են սալ նաև Իսպալիայի արտաքին քաղաքականության այս ժամանակաշրջանի դիվանագիտական փաստաթղթերը: Անհ` այդ փաստաթղթերի ուսումնասիրմանն ի նդաս` 2005 թ. սկզբին, Իսպալիայում ՀՀ դեսպանատան միջնորդությամբ, մեզ իրավունք ընձեռնվեց ուսումնասիրություններ սկսել Իսպալիայի արտաքին գործերի նախարարության դասմական դիվանագիտական արխիվում:

Ուսումնասիրությունները ցույց սվեցին, որ Իսպալիայի արտաքին գործերի նախարարության (Ֆառնեզինյան դրյակ) դիվանագիտական արխիվի դասնցներում հենց Հայաստան (Armenia) անվան սակ են դասնցանվում հայ ժողովրդին առնչվող փաստաթղթերը: Այս հանգամանքը չափազանց հեսափրակալան է հասկադես այն տեսանկյունից, որ մույնիսկ հայկական դեստության բացակայության դաշմաններում, Օսմանյան կայսրության հայաբնակ ժրաններն ընկալելի են եղել որդես Հայաստան: Այդ փաստաթղթերը դաշմանականորեն թվագրված են 60 համարով և գեսեղված են արխիվային սարբեր ֆոնդերում: Դասնք են.

**1. Քաղաքական շարք P (Serie Politica P) 1891-1916:**

*Արխիվային այս ֆոնդում Հայաստան (Armenia) անվան սակ զտնվում է ութ թղթապանակ. թիվ 325 (1891-1895 թթ.), թիվ 326 (1894-1896 թթ.), թիվ 327 (1895 թ.), թիվ 328 (1895 թ.), թիվ 329 (1895 թ.), թիվ 330 (1896 թ.), թիվ 331 (1896-1906 թթ.) և թիվ 332 (1907-1914 թթ.):*

Փաստաթղթերի այս խումբը հիմնականում առնչվում է արքայազն-համիդյան վարչակարգի ժամանակաշրջանին և սրանց մի մասն, ինչդեռ նվազ, արդեն տղազրվել է Ֆլորենցիայի հանձնաժողովի կողմից: «Քաղաքական շարքի» այս փաստաթղթերի մի զգալի մասը՝ 6 հաստով տղազրվել է նաև Իսալիայի արտոնախարարության կողմից՝ բացառադեպ ներքին օգտագործման համար, որը նույնպես զտնվում է դիվանագիտական այս արխիվում «Տղազրված դիվանագիտական փաստաթղթերի» LXVI համարի սակ: Ըստ մեր համեմատությունների, այդ հրատարակության մեջ բերված փաստաթղթերը ճշգրտությամբ համադասասխանում են բնագրերին:

Ավներն է, որ 1895-1896 թվականներից նկատվում է հայկական թեմայով փաստաթղթերի կտրուկ նվազում: Այս երևույթի դարձաբանումը տրվում է հենց այդ ժամանակի դիվանագիտական փաստաթղթերում և բացատրվում է Հայկական հարցի վրա Եվրոպայի ուժադրությունը հրավիրելու նպատակով հայ քաղաքական ուժի քայքայման և հրահրված իրականացված մի շարք գործողությունների (մասնավորապես Բաբը Ալիի, Գում Գափուրի և Բանկ Օսոմանի) հանգամանքով:

Ուրուսի ակտիվություն սկսում է նկատվել 1913-14 թվականների վերջի հիշատակված բարեփոխումների ծրագրի մեղմացման հետ:

Հայտնի է, որ Եռյակ դաշինքի կազմի մեջ մտնող երեք տերություններից երկուսը՝ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, ընդգծված թրաման դիրքում ունեին, որը բացատրվում էր ոչ միայն Օսմանյան կայսրությունում նրանց ունեցած ազդեցությունով, այլև՝ Եռյակ համաձայնությանը և, հատկապես, Ռուսաստանին հակադրվելու հանգամանքով:

Եռյակ դաշինքի կազմի մեջ մտնող Իսալիան, որը նոր էր ավարտել դաստիարակման թուրքիայի հետ, ելնելով դաշնակցային դար-

սավորություններից, բավական չեզոք դիրք էր գրավել հայկական բարեփոխումների գործընթացում՝ իր գործողություններում որդեգրելով Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ փոխհամաձայնեցված հանդես գալու մարտավարությունը:

Այդ երջանի նյութերը հիմնականում գտնվում են արխիվային այս ֆոնդի թիվ 332 թղթադանակում:

## **2. Քաղաքական արխիվ - ընդհանուր և կառավարական (Archivio Politico-ordinario e di gabinetto) 1915-1918:**

*Արխիվային այս ֆոնդում Հայաստանին առնչվող փաստաթղթերը գտնվում են թիվ 44 թղթապանակում և ընդգրկում են 1915-1918 թվականների դեպքերը:*

Թղթադանակն այդքան էլ հարուստ չէ, բայց և այնպես արժեքավոր նյութեր է պարունակում, որոնք վկայում են Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դեմ իրականացրած ցեղասպանության մասին: Չնայած նրան, որ թղթադանակն ընդգրկում է 1915-1918 թվականներին վերաբերող փաստաթղթերը, սակայն 1916 և 1917 թվականների մասին գրեթե ոչ մի փաստաթուղթ չկա, իսկ 1918 թվականի նյութերը հիմնականում վերաբերվում են Փարիզում գտնվող Պողոս Նուբար Փառայի գլխավորած ազգային ղախվորության գործունեությանը: Փաստաթղթերի սակավությունն արխիվային այս ֆոնդում բացատրվում է այն հանգամանքով, որ 1915թ. ամռանն Իսալիան, մտնելով ղախերազմի մեջ, դուրս բերեց իր դեստանասունը Կոստանդնուպոլսից՝ ԱՄՆ դեստանասանը ղախելով դիվանագիտական ընդամենը մեկ ներկայացուցիչ, որը հիմնականում ղեկ է զբաղվել Օսմանյան կայսրությունում բնակվող իսլամադավանների ղառադանության խնդիրներով: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ղախերազմի ընթացքում թուրքական գրախնությունն այնքան խստացված էր, որ, նույնիսկ, ստուգվում էր դիվանագիտական փոստը և հաճախ դրանք սեղ չէին հասնում: Ի դեպ՝ Իսալիայի արտաքին գործերի նախարարության ղառադանական դիվանագիտական արխիվի դիվանագիտական ներկայացուցչությունների արխիվների վերաբերյալ ֆոնդերում կան վկայություններ, որ ղախերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տարածքում գտնվող հյուղասոսարանների փակման և գույքի սեղափոխման ընթացքում դրանց արխիվները հաճախ ոչնչացվել են:

Այսուհանդերձ, չնայած այս երջանի՝ խնդր առարկա փաստաթղթերի սակավությանը, դրանց մեջ արդեն նկատվում է հայ ժողովրդի հանդեպ Իսալիայի դիրքորոշման փոփոխությունը: Խզելով հարաբերություններն իր երբեմնի դաճակիցների հետ և ղափարկելով մեջ մտնելով Եռյակ համաձայնության երկրների կողմին, իսպախական կառավարական երջանակների արձագանքներն առավել ակտիվ են: Դրանք առավել համակրանքով են խոսում հայ ժողովրդի մասին և իրենց անկեղծ վճակցությունն ու զայրույթն են հայնում հայկական կոստրածների առնչությամբ:

### **3.Քաղաքական գործեր (Affari politici) 1919-1930:**

*Այստեղ Հայաստանին առնչվող երկու թղթապատկաններ կան, որոնք գտնվում են 809 և 810 համարների սակ: Մասնից առաջինն ընդգրկում է 1919-1922 իսկ երկրորդը՝ 1922-1930 քաղականների իրադարձությունները:*

Փաստաթղթերը վերաբերվում են քաղաքական անցուղարձին, հայ ուրբերի խնդիրներին, Իսալիայում գործող հայամեծ կոմիտեների գործունեությանը, հայ փախսականներին Հայաստան վերադարձնելու Իսալիայի աջակցությանը, նաև՝ որոշ տեղեկություններ են դարձնակում թուրքերի կողմից հայերի ունեցվածքի զավթման մասին:

### **4.Խաղաղության կոնֆերանսներ (Conferenze della pace) 1919-1923:**

*Այս ֆոնդում պահպանվող նյութերի մեջ Հայկական հարցին վերաբերվող փաստաթղթերը գտնվում են 42, 47, 53, 54, 115 և 216 համարների թղթապատկաններում, որոնք չափազանց կարևոր են, հասկապես այն առումով, որ դրանք առնչվում են Հայկական հարցի միջազգային ֆունկտիոնների վերջին շրջանին:*

Վերջին երկու՝ «Քաղաքական գործեր» և «Խաղաղության կոնֆերանսներ» ֆոնդերի՝ Հայոց ցեղաստղանությանն ու Հայկական հարցին առնչվող փաստաթղթերն ընդգրկված են ժողովածուի առաջիկայում հրատարակվելիք երկրորդ հատում:

Այս չորս հիմնական արխիվային ֆոնդերից բացի, Հայկական հարցին առնչվող նյութեր կան նաև Իսալիայի՝ Լոնդոնի, Փարիզի, Պետերբուրգի, Բեռլինի, Վիեննայի, Կոստանդնուղոլսի դեստղանաների արխիվային նյութերում և արխիվային տարբեր ֆոնդերում գտնվող Թուրքիային առնչվող փաստաթղթերում:

Թուրհային առնչվող փաստաթղթերի մի զգալի մասը՝ 25 հաստով ևս տղագրվել է Իսալիայի արագործնախարարության կողմից, դարձյալ ներքին օգտագործման համար և զտվում է «Տղագրված դիվանագիտական փաստաթղթերի» XVI համարի սակ:

Կասարված ուսումնասիրության ընթացքում դարզվեց, որ մի շարք փաստաթղթերի կրկնօրինակները միաժամանակ զտվում են արխիվային սարքեր ֆոնդերի թղթադանակներում: Դա մեզ հնարավորություն սվեց մանրակրկիտ կերպով ուսումնասիրել և համեմատել դրանք միմյանց հետ և այստեղ ներկայացնել փաստաթղթերի առավել ամբողջական և ճշգրիտ օրինակները:

Ժողովածուի ներկա առաջին հաստում տեղ է գտել 1913-1917 թվականների իրադարձություններին առնչվող 225 փաստաթուղթ: Ժողովածուի երկրորդ հաստում զետեղվելու են 1918-1923 թվականների իրադարձություններին վերաբերող նյութերը:

Ներկայացվող փաստաթղթերն ամբողջությամբ հանրությանն են ներկայացվում առաջին անգամ:

Եվ չնայած ներկա ժողովածուի ամբողջական երկհասորյակն ընդգրկում է 1913-1923 թվականների փաստաթղթերը, այսուհանդերձ նդասակահարմար գտանք այս հաստի հավելվածում ի նդաս 1908-1909թթ. Կիլիկիայի հայկական կոստրածների ուսումնասիրման, զետեղել նաև այդ իրադարձություններին առնչվող 20 փաստաթուղթ, որոնք նույնդես շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Սույն ուսումնասիրության իրագործումը հնարավոր դարձնելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի սնօրինությանը, Իսալիայում չչ նախկին դեսդաններ՝ դարոն Գազիկ Բաղդասարյանին և դարոն Ռուբեն Շուգարյանին, Իսալիայի արսաֆին գործերի նախարարության դասմական դիվանագիտական արխիվի ողջ անձնակազմին և բոլոր նրանց, ովքեր իրենց աջակցությունն են ցուցաբերել մեր այս ձեռնարկմանը:

Հասուկ շնորհակալություն ենք հայտնում չչ ԳԱԱ Ցեղասղանության թանգարան - ինստիտուտի սնօրինությանը՝ ժողովածուի խմբագրման և հրատարակման գործը սսանձնելու համար:

*Արամայիս Բալոյան*





1

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարոնին՝  
Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
Կոստանդնուպոլիս, 25 հունվարի 1913թ.

Հեռագիր

թիվ. 406/103

Պարոն նախարար,

Մի քանի օր առաջ ընդունեցի Հայ առաքելական եկեղեցու դաստիարակ-  
րանի երկու ներկայացուցիչների՝ հայ աշխարհիկ խորհրդի նախագահ դարոն  
Սեփան Կարայանին և նույն խորհրդի անդամ դոկտոր Թորգոմյանին, որոնք  
եկել էին ինձ ներկայացնելու Ասիայում բնակվող հայ ժողովրդի վիճակը:

Այս դարոններն ինձ ներկայացրին, թե որքան սխուր են իրենց կոնակիցնե-  
րի (կենսական) լուսավորությունը: Իրենց գոյությանը սղառնացող վստահ վա-  
խից նրանք ստիպված չեն հեռանում բնակության կենտրոններից: Ուստի չեն  
կարողանում մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին և աղքատ են  
ծայր աղքատության մեջ, որն օր-օրի ավելի է սրվում:

Պատճառաբանը, սեսնելով մուսուլման բնակչության գրգռվածությունը,  
բախտուններից խուսափելու համար կոչ է արել հայերին դիմանալ ամեն ինչի  
անարդարություններին: Չնայած դրան՝ հաստատվում են Անատոլիայում ամեն  
աղքատ 6 կամ 7 հիսունյաների սղառնության մասին լուրերը, որոնք մնում են  
անդադար: Դեղձերի նման ընթացքը չի կարող ձգվել այսուհետև անորոշ, քանզի  
հայ ժողովուրդը կենսական անհրաժեշտությունից ելնելով ստիպված կլինի հե-  
ռանալ բնակեցված կենտրոններից, սակայն դրանով ավելի կհեծացնի ոճա-  
գործների գործը: Սակայն յուրաքանչյուր ժողովրդի համբերությունը սահման  
ունի, և հնարավոր է, որ հայ համայնքը չկարողանա անվերջ լռել և գլխիկոր  
մնալ բոլոր այն անարդարությունների առջև, որի զոհն է դարձել:

Մտանք այն դասառններն են, եթե դրանց, իհարկե, չավելանան այլ դաս-  
առններ, որոնք Անատոլիայում շուտով կհանգեցնեն մեծ անկարգությունների:  
Անատոլիայի բնակչությունը գրեթե ամբողջությամբ զինված է, և նրանք դարձ-  
յալ կընթուսանան այն սանջանների և սարաժայիյն այն զգալի կորուսների  
դասառնով, որոնք իրականացվել են Կայսրության կողմից այս դաստերազմի  
ընթացքում, որն այդ երջաններում համարվում է խաչի և կիսալուսնի դայֆար:  
Մուսուլմանական շահ ընտանիքներ մեծ կորուստներ կունենան այդ դաստերազ-  
մում, որն էլ հիսունյաների հանդեպ ասելության մի նոր առիթ կհանդիսանա:  
Օսմանյան կառավարությունը վերջին երջանում փորձում էր խուսափել ջար-  
դերից և անկարգություններից, վախենալով, որ դրանք իրենց արձագանքները  
կզսնեն Թուրքիայի եվրոպական երջաններում, սակայն կորցնելով եվրոպա-  
կան սարաժները, այժմ նա այդ կարողանից էլ է ազատված: Հայոց դաստիար-  
ակության արդարություն ճնշումներ է ենթադրում և վախենում է, որ այս դաստերազ-  
մից հետո Հայաստանում ժողովրդի կունենան ծանր իրադարձություններ:

Պատրիարքարանի ներկայացուցիչները եկել էին սեղեկանալու, թե Եվրոպական ինչ է մտադիր անել իրենց համար, քանզի Հայկական հարցն իր արտացոլումն էր գտել Բեռլինի դայմանագրի 61-րդ հոդվածում, և 1895 թվականից Կոստանդնուպոլսի դեսպանները դատարանում էին բարենորոգումների մի ծրագիր՝ այդ սարածքներում իրականացնելու համար:

Ներկայացուցիչները հայտարարում էին, որ որևէ հավաս չի ներհնչում օսմանյան կառավարության կողմից մեակվող բարենորոգումների ծրագիրը, եթե, իհարկե, դրանց չիրականացվեն տնտեսությունների հսկողության ներքո: Միաժամանակ կոչ արեցին, որ եթե թուրքերն ուզում են դաժակները ասիական սարածքները, ապա դեմ է մի շարք բարեփոխումներ կատարել՝ բացառադես Եվրոպայի հսկողությամբ: Ավելացրեցին նաև, որ հայերի դաժակները շատ չնչին են՝ նրանց անհրաժեշտ է կյանքի և գույքի ապահովություն:

Պարոն Կարայանին և Թորգոմյանին դատասխանեցի, որ օտար տնտեսության ներկայացուցիչը շատ զգույշ դեմ է լինի մեկ այլ տնտեսության ներքին խնդիրներին միջամտելու դեպքում: Նրանց, սակայն, վստահեցրի, որ եթե Հայկական հարցը քննարկվի Եվրոպայում, հայերը կարող են վստահ լինել, որ իսլամի ժողովուրդն այնպիսի դիրքորոշում կունենա, որով հարգված կլինեն հայերի զգացումները, ազատության [ձգման], հավասարության և առաստեղծության ավանդույթները: Սա է վերոհիշյալ դատարանների հետ ունեցած զրույցի համառոտ նկարագիրը, որը ներկայացնում են Ձերդ Գերագանցության ուժերությանը, քանզի կարծում են, որ շատ շուտով Հայկական հարցը նորից բարձրացվելու է և վերջնական լուծում է դաժակները:

Գարունի

Իսպիայի Արաբիան Գործերի Նախարարության Պատմական Դիվանագիտական Արխիվ՝ այսուհետև՝ ԻԱԳՆԴԿԱ, Թուրքիայի Դեսպանատուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

2

Իսպիայի արաբիան գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսպիայի դեսպան Գարունիին  
Հոուն, 1 փետրվարի 1913թ.  
Հեռագիր  
թիվ 700

Ըստ վստահելի տեղեկությունների, չնայած, հնարավոր է, որ Ռուսաստանը բարձրացնի Հայկական հարցը, այսուհանդերձ դեռևս հնարավոր է, նույնիսկ հավանական, որ դրանից խուսափելու մեծ գործադրած ճիգերը հաջողություն ունենան: Դրա համար անհրաժեշտ է, որդեսպան բալկանյան երկրների հետ խաղաղության կնքումը արագացվի, օսմանյան կառավարությունն անհատադ իրականացնի լուրջ քայլեր՝ հայերի վիճակը բարելավելու համար, սակայն այդ քայլերը լինեն ոչ թե ձևական, այլ անկեղծ և իսկադես բարելավեն հայերի

դայնանները, նախքան Ռուսաստանի կողմից Հայկական հարցի բարձրացումը, այլ խոստերով՝ քանի դեռ ուզեցին: Ձեր գերազանցությանը խնդրում եմ այս ամենը ոչ դաժանական կերպով հաղորդել օսմանյան կառավարությանը և հասկացնել նրանց, որ նրանց գաղտնաբար սրվող այս խորհուրդը բխում է Թուրքիայի բախտից և համընկնում է մեր բախտին՝ Ասիայում նրանց իշխանությունը դադարեցնելու ճեպակետից:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊՂԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., թղթադրամակ 161:

3

Իսախանյի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսախանյի դեսպան Գարոնիին  
Հռոմ, 7 փետրվարի 1913թ.  
Հեռագիր  
թիվ 06247/67

Պարոն դեսպան,

Շնորհակալություն եմ հայտնում Ձեր գերազանցությանը ս.թ. հունվարի 25-ի թիվ 103 հեռագրի<sup>2</sup> համար, որով ինձ տեղյակ եք դառնում Հայոց դատարանի ներկայացուցիչների այցի և Ասիայում հայերի վիճակի մասին նրանց նկատառումների մասին: Ըստ այդ ներկայացուցիչների՝ նման դայնաններ սիրում են վաղուց, այժմ դրանք ավելի են վաթարացել և կարող են առավել ծանրանալ մոտ աղաքայում:

Այդ կադակցությամբ առիթ եմ ունեցել վերջերս մի նամակ ուղարկել Նորին գերազանցություն վարչադեպարտմենտին, որի կրկնօրինակը կից ուղարկում եմ Ձեզ: Այդ նամակում իմ արտահայտած սկզբունքները համընկնում են այն ճեպակետներին, որ Ձեր գերազանցությունը ներկայացրել է իր գրուցակիցներին:

Հաստատելով այդ գրուցում Ձեր արտահայտած մտերմ ավելացնում եմ, որ այս դառնությունները հետաքրքրությունների մեջ չի մտնում միջազգային մակարդակով բարձրացնել Հայկական հարցը: [Հարցի՝ միջազգային մակարդակի] բարձրացումն այս դառնություններով կարող է առիթ հանդիսանալ զուգահեռաբար անդրադառնալ նաև Թուրքիայի ասիական տարածքների հետ առնչվող բան այլ հարցերին ևս, իսկ մեզ անհրաժեշտ է, որդեսգի Կայսրության այդ հասկածի տարածքային ամբողջականությունը բնարկված նյութ չդառնա առնվազն մի քանի տարի մինչև մեր կողմից կավարսվեն նախադասարանական այն աշխատանքները, որոնք կերախափորեն խնդրի լուծման մեջ մեր դերակատարությունն ու որոշ առավելությունները: Բայց որդեսգի այս ամենը ստացվի, անհրաժեշտ է, որ օսմանյան կառավարությունը զիսակցի և ամենայն դատարանականությամբ մոտենա կրկնվող այն բողոքներին, որ ստացվում են Փոքր Ասիայի հայ համայն-

ների կողմից: Այս իմաստով Ձերդ Գերագանցությունն ամեն դեղձում կարող է սեփական նախաձեռնությամբ, դասեհ առիթի դեղձում, դիմել Օսմանյան կայսրության արագործնախարարությանը, որդեգրի նա որքան հնարավոր է շուտ խաղաղություն հաստատի իր սիրադեղձության այդ կարևոր շրջաններում:

Սան Ջուլիանո

Առդիր

Իտալիայի արտաին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝

Իտալիայի Նորին Գերագանցություն վարչադեղձին

Հոռն, 28 հունվարի 1913թ.

Տեղեկացնում եմ, որ ս.թ. հունվարի 16-ին Սոֆիայի նախարարը<sup>3</sup> երկու հուշագիր է ուղարկել՝ մեկը Նորին Գերագանցություն քաղաքորին, մյուսը՝ Ձերդ Գերագանցությանը, Սոֆիայում հավաքված հայերի խորհրդի կողմից, որով խնդրում են Իտալիայի միջանցությունը Փոքր Ասիայում բնակվող հայ ժողովրդի վիճակի բարելավման գործում:

Այս կապակցությամբ, կարծում եմ, օգտակար կլինի ավելացնել, որ Հոռնի արհայական համալսարանի պրոֆեսոր կոնս Անջելո դե Գուբերնասիսի միջոցով վերջերս ինչ հասավ մի հայ հրատարակչի՝ պարոն Առաքելյանի, դիմումը: Նա մաս է կազմում Հայոց պատրարի կողմից նշանակված այն պատվիրակության, որը Բեռլինի համաշայնագիրը ստորագրած եվրոպական տերությունների կառավարությունների մոտ ներկայացնում է բուրհակասակ հայ ժողովրդի իրավիճակը: Դիմումում նա ցանկանում էր իմանալ, թե ե՞րբ կարող եմ ընդունել այդ պատվիրակությանը:

Կոնս դե Գուբերնասիսին պատասխանեցի, որ արհայական կառավարությունը լիովին տեղյակ է բուրհակասակ հայերի իրավիճակին, քանզի նրանցով բնակեցված շրջաններում խոսվում է բարենորոգումների մասին, և վատ չէր լինի, որ այդ կապակցությամբ տերությունները բնատրկումներ կազմակերպեն ննության առնելով այդ խնդիրը՝ հաշվի առնելով, սակայն, մեր բարեկամական հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ: Նրան սասացի, որ ավելին չեմ կարող վստահեցնել այդ կապակցությամբ, նույնիսկ եթե այդ պատվիրակությունը ժամանի Հոռն, սակա իմ հայտարարությունները ոչնչով չեն տարբերվի արդեն սավածից:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԻԱ, Թուրհիայի դեսպանատն 1829-1937թթ., թղթադանակ 161:

4

Տրադիզոնում Իսալիայի գլխավոր հյուղասոս Գորհինի<sup>4</sup>  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարոնիին  
*Տրապիզոն, 8 մարտի 1913թ.*

գաղսնի  
թիվ 245/39

Պարոն դեստան,

Պասասխանելով երեկվա Ձեր գրությանը՝ դասիվ ունեմ անհատադ Ձեզ ներկայացնելու Հայկական հարցի առնչությամբ իմ սեղեկությունները:

Հյուղասոսական իմ իրավասությունների Երջանակի մեջ են մտնում Ձեզ հետաքրքրող Երջաններից երեքը՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները:

Էրզրումում իրավիճակը հանգիստ է: Լավասեսական այն դասկերը, որ Ձեզ է ներկայացրել այդ դասոնյան, իրասեսական է թվում, եթե վերաբերում և սահմանափակվում է միայն այս վիլայեթով, որսեղ, թե՛ կառավարողների գործունեության, թե՛ թվականորեն գերիշխող հայ բնակչության հետ նրանց համագործակցության, թե՛ սահմանադրության հռչակման ժամանակաերջանի մուսուլման բնակչության և հրեերի փոքրաթիվ լինելու հանգամանքներն այստեղ հասաստել են կենսական բնականոն դայմաններ, որի արդյունքում ցնցումներ և բախումներ գրեթե սեղի չեն ունենում, և այս ամենը կարող է գրավել միջազգային հանրության ուսադրությունը:

Բայագեսում, որ Էրզրումի վիլայեթի կարևորագույն քաղաքն է, որսեղով անցնում են Պարսկաստան մեկնող քարավանները, և որ նկասվում է ռուսական Եունչը, մասնավորադես 1876-1877թթ. դասերազմից և Սան Սեսֆանոյի դայմանագրի կնքումից հետո, իրավիճակը նույնդես հանգիստ է, ինչքանով որ ինձ սեղեկադրեց ոչ մուսուլման մի դասոնյա, ով մի քանի օր առաջ էր այդսեղից եկել:

Ինչ վերաբերում է Վանին, որը միանճանակորեն կարելի է հայկական վիլայեթ անվանել, և Բիթլիսին, որն անմիջադես հաջորդում է Վանին, չի կարելի ասել նույնը: Սակայն Բալկանյան դասերազմի սկզբից քիչ անց, այս երկու վիլայեթներում իրավիճակը զգալիորեն բարելավվել է, բայց խոսքը վերաբերում է միայն այս դասին, և կոնկրետ այս դասի համար այդ դասոնյայի կողմից Ձեզ ներկայացրած լավասեսական դասկերն ընդհանուր առմամբ, իրոք, համադասասխանում է իրականությանը:

Վանում և Բիթլիսում ճարունակվում են հայերի սղանությունները և դրանք կասարվում են ամեն օր, սակայն ի սարբերություն ոչ վաղ անցյալի, այժմ դրանք կասարվում են ո՛չ մասսայաբար և ո՛չ մուսուլման [թուրերի] կողմից, այլ՝ հրական առանձին խմբերի կողմից: Քոդերն ավազակ, վրանաբնակ, դաժան, արյունարբու և ընդվզող ցեղախումբ են:

Ոսիկանությունը ցույց է սալիս, թե եռանդաբար փնսում է մեղավորներին, սակայն նրանց անկարողության, կամ, ավելի ճիտ կլինի ասել, հայերի

Հայոց ցեղասպանություն. դիվանագիտական վավերագրեր  
հանդեպ ասելության տասնամյակ, մեղավորները գրեթե միշտ չեն զսնվում և  
անդաժիժ են մնում: Նույնիսկ Վանի ֆաղափառե՛ս Կաղանաջյանի սղանու-  
թյունը դեռևս բացահայտված չէ:

Մի բարձր պոլիտիկոսի ինձ հայտնի դարձավ, որ Վանի գլխավոր նահանգա-  
դե՛սը համաձայնության մեջ է եղել ֆրեյդի հե՛ս՝ ընդդեմ Հայ հեղափոխական  
դա՛ւնակցության: Միգուցե նա վախենալով ինչդե՛ս ֆրեյդից, այնդե՛ս էլ հայե-  
րից, (առաջինները դա՛ժան և վայրենի են, հայերը՝ ավելի բազմամարդ, համառ  
և հասարակա՛մ), սակայն ընձերելով առաջիններին, ֆանգի նրանք մուսուլման  
են, իսկ հայերը՝ քրիստոնյա, թ՛ւնամանք է առաջացնում նրանց մեջ, կիրառելով  
«բա՛ժանիւր և սիրիւր» սկզբունքը:

Այս վերջին օրերին մի բախում տեղի ունեցավ Վանի ժանդարմների և ֆրա-  
կան մի ավազակախմբի միջև: Հայ ժանդարմը սղանեց ֆուրդ ավազակադե-  
սին, որին վերագրվում էր նաև Կաղանաջյանի սղանությունը: Հայ ժանդարմն  
այժմ ձերբակալված է և դասադարձվում է:

Հայկական հարցի կողմին այժմ առաջ է եկել նաև ֆրակական հարցը: Ի՞նչ  
կան ֆրեյդ, որոնք մուսուլմե՛ս ֆարգում են անկախության գաղափարը և սղառ-  
նում են աղոսամբել: Ի՞նչ կողմից չճշված սլյալներով, ֆրեյդը դասառա՛ս են  
համագործակցել նաև հայերի հե՛ս՝ ընդդեմ մուսուլմանների, եթե նրանց խնդի-  
րը չբավարարվի:

Մոտ աղագայում մեկ այլ խժոճություն է սղասվում, որը նախադասառա՛ս-  
վում, սակայն գաղճնի է դա՛հվում: Կարծում են այն կազմակերպվում է սա՛հ-  
մանին զսնվող ռուս գործակալների կողմից:

Թե՛ն չեն կարող բացառել այս ամենը, բայց կասեն, որ ինձ չի թվում, թե  
այդ Երջաններում տեղակայված ժանդարմների համալրվել է Մակեդոնիայից  
եկած հրամանատարներով և գորամասերով: Սակայն ճիշտ է, որ 1911թ. սկզբնե-  
րին, ինչդե՛ս տեղեկացրել են արհայական դե՛սդանասանը, Վան է ուղարկվել օս-  
մանյան ժանդարմների մի ընձրովի գորաբանակ, որը դեկավարում էին չորս  
օսարեկրացի հրամանատարներ՝ մեկ գեռմանացի, մեկ ֆրանսիացի, մեկ իսալա-  
ցի և մեկ անգլիացի: Ժանդարմների այդ լավագույն գորախումբն այլևս հե՛ս չվե-  
րադարձավ և մնաց թուրք-դարսկական սահմանին՝ Վանի Երջանում, և կարծում  
են, որ դրա հրամանատարությունը տեղակայված է հենց Վան ֆաղափում:

Վարչական բարեփոխումներ, որդե՛ս այդդիսին, այդդե՛ս էլ չիրագործվե-  
ցին, բայց տեղական ի՛ւրաճությունները սա՛ցված հրահանգներից և դա՛հի  
անհրաժե՛տությունից ելնելով մի փոքր բարելավեցին կառավարման եղանակ-  
ները՝ ավելի ֆիչ անհանգստացնելով բնակչությանը: Նույնիսկ հանդուրժում  
էին, որդե՛սսի ջարդերից, բռնություններից, ֆաղափական հե՛սաղոնումներից և  
վախից իրենց բնակավայրերը լքած հայերն ու ֆրեյդը վերադառնան իրենց տե-  
րը: Այս դրական տեղա՛ւրդը հե՛րել չի լինի, սակայն, այն բավարար չէ, և որե՛ն  
երա՛ւիսներ չկան աղագայի համար:

Տակավին չլուծված է մնում այն մեծ խնդիրը, որ վերաբերում է հայերի հողերին և գույրին, որոնք բռնազավթվել և թալանվել են ֆրեյերի և մուսուլմանների կողմից 1895 թ. ջարդերի ընթացքում և դրանցից հետո: Խնդիրը շատ ծանր է, և դա է այն հիմնական դասճառը, որը վաղվա օրվա հանդեպ վասահություն չունենալու դասճառով, ծնում է նման իրավիճակ:

Պես է ավելացնեն սակայն, որ հայերի դառնակավածությունը հենց իրենք իրենց մեջ, ֆաղափական և կրոնական սարաձայնությունները, բնավորության փոփոխական լինելն ու սաֆարյունությունը շատ են դժվարեցնում դեղերի ընթացքն ու իրավիճակը:

Հայերի թիվը հասկվում է մոտ 3 միլիոն, որոնցից 1.250 հազարը բնակվում են Թուրքիայում, այդքանն էլ՝ Ռուսաստանում, մնացած կես միլիոնը ցրված են Պարսկաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Ճապոնիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հարավային Ամերիկայում և Եվրոպայում: Սրանցից 200 հազարը կաթոլիկներ են, մնացածը՝ Առաքելական Եկեղեցու հետևորդներ, կան նաև փոքրաթիվ բողոքականներ և այլք:

Օսմանյան կայսրությունում բնակվողները՝ սոցիալ-ֆաղափական շեսանկյունից բաժանված են երեք խմբի.

1. Պահպանողականներ, սրանք ֆարզում են բացառապես հայ ժողովրդի ինքնուրույնության սկզբունքը, կրոնի, լեզվի և ավանդույթների անաղարտությունը, բացառում են ցանկացած սիրի ձուլում և համագործակցություն մուսուլմանների հետ և ցանկանում են, որդեսգի համայնքի և վարչակազմի ղեկավարման գործում մաս կազմի նաև հոգևորականությունը:

2. Հնչակյաններ. չափավոր ժողովրդավարական այս խմբավորումը հնարավոր է համարում թուրքերի հետ բարդացիական հարաբերությունների հաստատումը՝ առանց նրանց հետ համագործակցելու, և բացառում է համայնֆային կյանքում հոգևորականության ղեկավար դիրք ունենալու հանգամանքը:

3. Դաճնակցականներ. սրանք սահմանադրության հաստատման ընթացքում բավականին լավ համագործակցում էին երիտթուրքերի հետ և շատերն անդամագրվում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության սեղական կոմիտեներին: Սակայն նրանց շարժումն հիասթափություն մտավ, և նրանք ընդվզեցին, գայթակղվեցին ողջ Անատոլիայով և Միջագետքով ցրված ամերիկյան ու յուրթերական ֆարզիչների կողմից և դիմեցին այլևայլ անօրինական գործողությունների:

Հայերի երկու երրորդը դասկանում է առաջին խմբին, մնացած մասը, որոնք ավելի անհնազանդ կարելի է կոչել, անդամագրվել է մյուս երկու խմբերին, և շատ հաճախ հայերի դժբախտություններն արդյունք են հենց նրանց գործողությունների, որոնք զգրում են մուսուլմաններին և ֆրեյերին:

Այս ամենից դարձ երևում է, որ Հայկական հարցն այժմ չի կարելի համարել որդես լուծման փուլում զսնվող հարց. այն զսնվում է դադարի և սղաս-

ման փուլում: Թուրքերն այս վիճակը համարում են բարելավում, և դրա համար նրանց չի կարելի մեղադրել: Հայերը, սակայն, որ բնավորությամբ թերահավաս են և ունեն անցյալի դառը փորձը, չեն վստահում և կարծում են, որ թուրքերը չեն հրաժարվել իրենց ձուլելու ծրագրից և նրանց բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ ղարզաղես տյախի թելադրանք է, քանզի [թուրքերը] վախենում են հրահրել Ռուսաստանի գայրույթը, որի առդյունում կարող է գրավվել Հայաստանի սարածքը, ինչդեռ նաև վախենում են կորցնել սերությունների համակրանքը: Հայերը վստահ են, որ շուտով թուրքերը կսկսեն լայնածավալ գործողություններ, իսկ այժմ բռնություններ գործադրում են որեւէ կարող են. նրանք բռնություններ են իրագործում այն հայ կանանց և ընտանիքների նկատմամբ, որոնց տղամարդիկ մեկնել են մարտի դաս, սիրանում են նրանց ունեցվածքին և, նույնիսկ, սղանում են վիրավոր հայ զինվորներին, որդեսգի հիվանդանոցներում տեղ լինի մուսուլման վիրավորների համար ... Շաս աս են հայերի գանգասները:

Միևնույն ժամանակ հայերը գաղտնաբար զինվում են ինչդեռ հույները, որդեսգի այս անգամ թանկ վաճառեն իրենց կյանքը, դրան սղառնացողներին հակադրելով ջարդեր՝ ջարդերի դիմաց:

Խնդիրն ավելի է բարդանում ու խճճվում, ինչդեռ արդեն ասել եմ, քրդերի գուզընթաց հուզումների և ռուսների միջամտության հետևանքով:

Թուրքական կառավարությունը, խաղաղությանը նղաստելու համար, շուտով կսկսի կիրառել վերջերս ընդունված գույրահարկի մասին օրենքը, սակայն, ցավով արտի, կհանդիտի այն դժվարություններին, որոնց մասին արդեն նշեցի:

Հայսարարվում է նաև, որ շուտով Կոստանդնուպոլսից մի հանձնախումբ կգա, որը կհամարվի տեղական մարմինների ներկայացուցիչներով և կայցելի հայկական վիլայեթներ՝ նղասակ ունենալով վերականգնել ժանդարմերիան, հետաքրքրելով նաև առկա այլ խնդիրներով՝ բարեփոխումներն իրականացնելու համար: Անկասկած սա բարի կամքի դրստորման ևս մի ձև է, սակայն դեռևս չիրագործված, նրա շուտ արդեն ձևավորվել է մեծ անվստահության մթնոլորտ:

Կառավարության մեկ այլ նախաձեռնությամբ՝ վերջին գորակոչով հավաքագրված զինվորներն ուղարկվում են երկրի խորքերը. ամեն օր բազմաթիվ զինվորներ են գալիս և տեղակայվում այստեղ: Մրանք շուտով ռազմական կարգադրություններ կստանան և կտեղաբարձվեն դեղի արդեն որոշված սահմանագոտիները՝ Բայբուրդ, Երզնկա, Էրզրում, Բայազետ և Վան: Այդ զինվորների և ժանդարմերիայի միջոցով Բարձր Դուռը հույս ունի վերահսկել սահմանին տիրող իրավիճակը, որտեղ տեղակայված ռուսական զորքերը կանգնած են որդես մշակական սղառնալիք:

Թուրքիայում բնակվող հայերի վիճակի մասին սարածվող ահազանգերը, ըստ վերջին իրադարձությունների, չեն հաստատվում. վիճակը կայուն է և, նույնիսկ, նշմարվում է մի փոքր բարելավում:

Իրավիճակը, որ ներկայացրի, այս դառին համադասաստանում է իրականությանը: Եթե ձյուն տեղա, և դրա ցեղը մի քանի մեծով բարձրանա և փակի ճանադարհները, ապա վիճակի կտուկ փոփոխություն մոտ աղազայում չի լինի: Խնդիրն իմ ուսադության սակ կլինի, և յուրաքանչյուր հնարավորությամբ դեղմում Ձերդ Գերազանցությանը կտեղեկացնեմ իրավիճակի մասին:

Պարոն դեստան, ընդունե՛ք հարգանքներս հավաստիք:

**Գործինի**

ԻԱԳԼՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

5

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարունին՝  
Իսալիայի արսափն գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Կոստանդնուպոլիս, 18 մարտի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 1290/295

Պարոն նախարար,

Տրադիզոնի արքայական գլխավոր հյուղասնոր իր գեկույցում ներկայացրել է Հայաստանում իրող իրավիճակը: Այդ գեկույցը<sup>5</sup> կից ուղարկում եմ Ձեզ: Դրանից կարելի է հետևություն անել, որ իրավիճակն այնտեղ այդքան էլ վարդագույն չէ, ինչդեռ Ձեզ ներկայացրել եք Նաքի բեյը: Մեր հյուղասնոր կիտեկի իրադարձություններին և մեզ կտեղեկացնի իրավիճակի փոփոխությունների մասին:

Պարոն նախարար, ընդունե՛ք հարգանքներս հավաստիք:

**Գարունի**

ԻԱԳԼՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

6

Իսալիայի արսափն գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարունինին  
*Հոուն 8 ապրիլի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 2103

Պարոն դեստան,

Այսօր հանդիղեցի դարուն դե Մերեյին<sup>6</sup> և զրուցեցինք Հայաստանի խնդրի մասին: Նա կիսեց իմ կարծիքն այն մասին, որ այժմ նղասակահարմար չէ Հայկական հարցի բարձրացումը: Կարծում եմ, որ երիթուրերը դեժե է բարեկամաբար խորհուրդ սան Բարձր Դռանը, որդեսգի այն որքան հնարավոր է խուսափի:

հայերին վնասներ տասճառող գործողություններից: Նրան սեղեկագրի, որ, ըստ Տրադիզոնում մեր հյուպատոսի գրության, վիճակը մի փոքր բարելավվել է:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

7

Հալեթում Իսալիայի գլխավոր հյուպատոս Գաուսիերին՝  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարրոնիին

*Հայեպ, 17 սպրիլի 1913թ.*

Հեռագիր

թիվ 2186

Պարոն դեստան,

Դեղին այնքան հրատաղ է, որ հեռագրել եմ նաև արքայական նախարարին: Այս գիշեր կաթոլիկ հայերի եղիսկոդոսը մի հեռագիր է ստացել, որում ասվում է. «Նախորդ երեկո շուկայի կենտրոնում երկու ժանդարմներ առանց տասճառի սվիններով հարձակվել են բնակչության վրա: Հրամանատարի հրամանով նրանց են միացել ժանդարմների մի խումբ և շարունակել խուսանգումները: Մեր կյանքը վսանգի մեջ է, անհրաժեշտ է անհատաղ միջամտություն: Նմանատիպ հեռագրեր են ուղարկել սարբեր գյուղեր, և այժմ Ադանայի բնակչության մեջ ջարդերի վախից ահավոր սազմաղ է առաջացել: Քրիստոնյաներն առաջատար են գտնում եվրոպացիների սներում: Խնդրում ենք արքայական նավերից ուղարկել՝ մեզ պաշտպանելու համար»:

Անմիջադեպ կաղվեցի Հալեթի եղիսկոդոսների հետ, բայց նրանք ավել ոչինչ չգիտեին: Առավոտյան կկաղվեն կոլեգաներիս հետ, քանզի այժմ կեսգիշեր է՝ սեղեկանալու համար, թե նրանք ի՞նչ նորություններ ունեն:

Գաուսիերի

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

8

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարրոնիին՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 13 մայիսի 1913թ.*

Հեռագիր

թիվ 2832/500

Պարոն նախարար,

Պատիվ ունեն Ձեզ սեղեկացնելու, որ հայկական տասվիրակությունը, որը գլխավորում էր տասրիարբը, երեկ մի հուռագիր է ներկայացրել Մեծ Վեզիրին,

որում ներկայացնում են հայերի ցավալի վիճակը, հայկական նահանգներում սիրող վախի մթնոլորտը և այլն:

Հուսազիրը հեսաբրի մի փաստաթուղթ է, որը սեղծված իրավիճակում չափազանց կարևոր դեր կարող է խաղալ հայ համայնքի և թուրքական կառավարության հարաբերություններում: Հուսազրում հստակ նշվում է, որ հայ ժողովուրդը չի ցանկանում անջատվել Օսմանյան կայսրությունից, սակայն անհրաժեշտ է համարում դեռևս 1878թ. Բեռլինի կոնգրեսով խոստացված բարեփոխումների իրականացումը, որդեսգի հստակ երևան հայերի կյանքի և ունեցվածքի աղաժողովության երաժիսիները:

Եթե օսմանյան կառավարությունն այս անգամ էլ անսեսի այս կոչը, որը, երևում է, վերջինն է, և անհաղաղ չարգելի նոր բռնությունները, նոր ջարդերն ու հեսաղոնդումները, աղա Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը չեն կարող իրենց հայացքը չողդել դեղի իրենց այն կրոնակիցները, որոնք հանգիստ աղոթում են Ռուսաստանում, և եթե նույնիսկ անկախությունն այնտեղ անհնար լինի, կզերադատեն աղբել մոսկովյան ցարի, քան Կոստանդնուպոլսի սուլթանի իշխանության ներքո:

Վերջում դասիվ ունեն Ջեդ Գերազանցությանն ուղարկելու վստահելի աղբյուրներից ինձ հասած՝ Հայկական հարցին առնչվող մի քանի գաղտնի նորություններ:

Գարունի

Աղդիր

1. *Քյամիլ փաշայի<sup>7</sup> կառավարությունը ռուսական միջամտության սպառնալիքի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով, որ երկրի արագորժնախարարը՝ պարոն Նոստունկյանը,<sup>8</sup> հայ է, խաղաղության հաստատման նախաշեղծման սկսել է լրջորեն զբաղվել Հայկական հարցով: Թվում է, թե երիթուրբարի այս կառավարությունը դեմ չէ սկանջալուր լինել հայերի ցանկություններին: Ինչպես ինչ տեղեկացրեցին վստահելի աղբյուրից, երիթուրբարի կոմիտեի համագումարի վերջին նիստում լսվել է Հայական հարցը: Նախկին պատգամավոր Սերեա Միդիաս Շուրին, անդրադառնալով ինդրին, հայտարարել է, որ կառավարությունը որոշել է մի շարք օտարերկրացիներ հրավիրել՝ Հայաստանում բարեփոխումներն իրականացնելու համար: Հենց որ նրանք ժամանեն Անատոլիա, կառավարությունը մարդաստանար կանցկացնի՝ ցույց տալու համար Եվրոպային, որ հայերն այդ շրջաններում ընդամենը փոքրամասնություն են կազմում: Նրանց տկոսային քվախանակը տասանվում է 10-ից 37 տկոսի սահմաններում:*

*Ինչպես ինչ տեղեկացրեց հայերի նախկին պատրիարք Օրմանյանը,<sup>9</sup> Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների այս նախաշեղծությանը հավանություն են տալիս բնակչության բոլոր շերտերը: Նույնիսկ Փարիզում գործող հայկական պատվիրակությունը ցանկանում է ֆրեդին ևս մասնակից դարձնել*

այս գործին հայերին հասկացնելով անշուշտ, գլխավոր դերը: Օրմանյանն ինչ ասաց նաև, որ հայերն այսօր բաժանված են երկու խմբի. մի խումբն ուզում է Փարիզում զսնվող հայկական պասվիտակության միջոցով շարժել եվրոպական տնտեսական հետաքրքրությունը Հայկական հարցի շուրջ, իսկ մյուս խումբը ցանկանում է տեղական հայկական կոմիտեաների միջոցով սադրանքներ և խժոժություններ իրականացնել: Ներկայումս կան երկու ասպասամբական կենտրոններ. մեկը՝ Չեյթունում, որը հունական կառավարության հետ սերտ կապի մեջ է և զսնվում է նրա ազդեցության տակ, մյուսը՝ Վանում: Ռուսաստանն իր հերթին ակտիվ աշխատանքներ է իրականացնում Բրիտի շրջանում: Բրիտի առաջնորդն Արդուրեսակն է, որը բավական երկար ժամանակ զսնվում էր Թիֆլիսում: Թուրքական կառավարությունը ցանկանում է նվազեցնել հայերի թիվը՝ այդ նպատակով կազմակերպելով եվրոպական շրջաններից մուսուլմանների տեղափոխությունը դեպի հայկական շրջաններ:

2. Հայկական հարցի ներկա վիճակի մասին որոշ տեղեկություններ ստացա գերապատիվ Օրմանյանից և հայկական այլ աղբյուրներից:

Հայկական շարժման կենտրոնը զսնվում է Եգիպտոսում: Դրա ղեկավարը հայտնի հեղափոխական Դամադյանն է: Հայկական կոմիտեաներն աջակցություն են ստանում Հունաստանից և թվում է, թե այնտեղից զենք և զինամթերք են ներկրում: Երզնկայում տեղի ունեցած պայթյունը ցույց է տալիս, որ այնտեղ բավականին շատ զինամթերք է կուտակված եղել: Հայերի առավել խոհեմ մասը բնադատում է այդ շարժումը: Հայոց Կաթողիկոսը փորձում է սանձել հայկական բոլոր կուսակցությունների ծայրահեղական քնների գործողությունները: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքը Եգիպտոս է ուղարկել Օսմանյան բանկի աշխատակից պարոն Փափազյանին և վստահելի մեկ այլ անչնափորության Դամադյանին սաստելու համար:

Երիթուրեհի կոմիտեի վերջին հավաքի ժամանակ որոշվել է, որ կառավարությունը բոլոր հնարավոր միջոցներով պետք է աջակցի Հայոց պատրիարհին, որի թուլության պատճառով հայկական որոշակի շրջանակներ ակտիվ պայքար են սկսել նրա դեմ: Նիսի ընթացքում Մուսա Բյազիմը տեղեկություններ պահանջեց «Թանին»<sup>10</sup>-ում սպագրված այն հոդվածի մասին, ուր դրականորեն էր խոսվում Հայկական հարցի մասին: Թալեաթը<sup>11</sup> նրան պատասխանեց, որ այդ հանդեսը չի արտահայտում կոմիտեի տեսակետները:

Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկություններից երևում է, որ Ռուսաստանը ցանկանում է բարձրացնել Անատոլիայի շրջանների հարցը: Եթե նախկինում թվում էր, որ Ռուսաստանը ցանկանում է տեղանին դնել Հայկական հարցը, այս անգամ կարելի է վստահաբար ասել, որ նա խնդրին ցանկանում է սալ ֆրակական երանգ և ստեղծել մի նոր Ռումելիա՝ Անատոլիայի արևմուտքում: Այս փաստն ասպացուցվում է նաև այն հուշագրով, որ մարտի 17-ին ուղարկվել էր Մեծ Վեզիրի գրասենյակ, որտեղ կարծում են, որ հուշագիրը կազմվել է Ռու-

սասանի դեսպանասան դրդումով: Մեծ Վեզիրը կարգադրել էր պարզել հուշագրի ծագումը, սակայն Պալուի (այդ բնակավայրից էր ուղարկվել հուշագիրը) ազդեցիկ դեմքերը կրակակնասպես հերել էին իրենց մասնակցությունն այդ գործում:

Շարունակվում են ռուսական զորքերի կենտրոնացումները թուրք-պարսկական սահմանին:

3. Վասսահեյի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, Չասկի տներից հետո Հայոց պատրիարքի և Բարձր Դռան հարստերություններում սրում է նկատվում, որը շուտով ճզնաժամ կառաջացնի պատրիարքարանում, քանզի ներկա պատրիարքը չի կարողանում վերահսկել իրավիճակը: Այդ պաշտոնում առավել նպասակահարմար թեկնածու է համարվում Դիարքեֆրի արեպիսկոպոս Չավենը: Պատրիարքի պաշտոնագրկումն ազգային ներքին անհրաժեշտություն է, որով արտահայտվում է հայերի բողոքն ընդդեմ առկա իրավիճակի: Պատրիարքական ճզնաժամը կազդանշի դիվանագիտական միջամտության սկիզբը:

4. Հաստատվում է, որ երիթթուրքերի կոմիտեան և կառավարությունը փորձում են հայ պատգամավորների և ազդեցիկ այլ անձանց միջոցով հայերի շրջանում բարեփոխումների դեմ տրամադրություններ առաջացնել: Ռուսական դեսպանատունը շարունակում է գումարներ վճարելով ակտիվ պահել հայկական հուզումները: Կառավարությունն իր հերթին ջանք չի խնայում նպաստելու այն շարժմանը, որը դեմ է արտերկրի հսկողության սակ բարեփոխումներ անցկացնելուն: Ամեն դեպքում Հայկական հարցը մի տեսակ հանգիստ փուլում է գտնվում:

յունից նդասակահարմար չէ Հայասանի բարեփոխումներին սալ այնդիսի բնութագիր, որը կնմանվի ինճնավարության որևէ ձևի: Քանզի փորձը ցույց է սալիս, որ Օսմանյան կայսրության համար նման կարգավիճակները վսանգավոր են: Հասարակական անվսանգություն և աղարարդասություն, ահա այն ամենը, ինչ Հայասանին անհրաժեես է, և, իմ կարծիքով, թուրական կառավարության կողմից վերջերս սրված կարգադրությունները, որոնք համալրված էին ավստ-հունգարական և գերմանական դասվիրակների հայսարարության սկզբունճներով, դրանց համար բավարար երաշխիք են հանդիսանում:

Գարունի

ԻԱԳՆՊԴԱ, Թուրիայի դեսդանսուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

58

Իսալիայի արսափին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոսսանդնուդոլսում Իսալիայի դեսդան Գարունիին  
Հոուն, 8 օգոսոսի 1913թ.

Հեռագիր  
թիվ 5577

Պեսերբուրգի մեր արբայական դեսդանը հեռագրել է.

«Ինձ թվում է, որ ռուսական կառավարությունը մսադիր է Ադրիանադոլիսի հարցի ճննարկման ժամանակ դնել նաև Հայկական հարցի լուծումը, բայց՝ առանց դրանք իրար կադելու: Այս առթիվ Սազոնովն ինձ ու Գերմանիայի դեսդանին ֆանիցս ասաց, որ չնայած Ռուսասանը կարող է զիջել և համաձայնվել վեց վիլայեթները երկու մասի բաժանելուն, սակայն երբեք չի հրաժարվի այն սկզբունճից, ըստ որի դրանց վերահսկիչների նեանակման երաշխիճները դեբտ է ադահովված լինեն Լիբանանի կառավարչի նեանակման համար հասսաված սկզբունճով»:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրիայի դեսդանսուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

59

Կոսսանդնուդոլսում Իսալիայի դեսդան Գարունիին՝  
Իսալիայի արսափին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
Կոսսանդնուդոլիս, 12 օգոսոսի 1913թ.

Հեռագիր  
թիվ 614

Թվում է թե հայերը, կասկածելով, որ մեծ սերությունների այս ճննարկումների աղյունում ծնվելիք բարեփոխումները կկիրառվեն գործնականում, կար-



ծում են, որ ավելի նդասակահարմար է իրենց համար համաձայնության գալ քուրական կառավարության հետ և ընդունել նրանց կողմից առաջարկվող ծրագիրը, որը համալրված է հասուկ հանձնաժողովի նիստի ժամանակ արված ավստր-գերմանական դասվիրակների հնչեցրած հայտարարության դրույթներով: Նրանք, միգուցե, կդահանջեն, որ Հայասանը բաժանվի երկու մասի, որտեղ, նոր հրահանգներն իրականացնելիս, կլինի համագործակցություն Եվրոպայի հետ և կերաւխալովեն հավասարության սկզբունքները:

Գարունի

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., քրթադանակ 161:

60

Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարունիին  
*Հոռն, 15 օգոստոսի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 5745

Պասասխանում եմ Ձեր թիվ 614 հեռագրին:<sup>39</sup>

Հայերի նման դիրքորոշումը համահունչ է թե՛ իրենց, թե՛ Թուրքիայի և թե՛ մեր հետաքրքրություններին, ուստի Ձերդ Գերազանցությանը խնդրում եմ նրբանկատորեն աջակցել դրան:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., քրթադանակ 161:

61

Պեսերբուրգում Իսալիայի դեստանասան հանձնակատար Բորդոնարոն՝  
Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Պեսերբուրգ, 6 սեպտեմբերի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 545

Պարոն նախարար,

Գաղսնի կերողով տեղեկացա, որ ռուսական կառավարությունը Հայասանի խնդրի առնչությամբ մտերի փոխանակություն է ունեցել գերմանական կառավարության հետ: Պարոն Ներասովը,<sup>40</sup> այստեղի գերմանական դեստանասան հանձնակատարին գոհունակություն է հայտնել, Բեռլինում իրենց այդ ֆայլը դրականորեն ընդունելու համար:

Բորդոնարո

ԻԱԳՆՊԴԱ, Տղազոված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 567:

62

Բեռլինում Իսալիայի դեսպան Բոլլասին՝

Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Բեռլին, 8 սեպտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 703

Այստեղի՝ Ռուսաստանի դեսպանասան հանձնակատարը նոր առաջարկներ է ներկայացրել Կոստանդնուպոլսում Հայաստանի բարեփոխումների համար անցկացվող բնակարանների համար: Ինչպես ինձ տեղեկացրեց Պարոն Յագովը, խոսքն այն մասին է, որ այժմ ռուսական կողմը ցանկանում է Հայաստանից ձևավորել ոչ թե մեկ վարչական կենտրոն, ինչպես դա նախատեսված է Մանդելեցամի ծրագրում, այլ այն բաժանել երկու նահանգների, որոնց սահմանները, սակայն, չեն համընկնի ներկայիս վիլայեթների սահմաններին: Նախքան դատարանները, Պարոն Յագովը ցանկություն է հայտնել առավել հստակ տեղեկություններ ստանալ Վանգենհայմից:

Բոլլասի

ԻԱԳՆՊԴԱ, Տղազրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 568:

63

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարոնին՝

Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Թերապիա [Կոստանդնուպոլիս], 9 սեպտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 689

Պարոն Վանգենհայմը հաստատեց, որ Հայկական հարցի առնչությամբ ռուսական կառավարությունն, իրոք, մտքերի փոխանակման առաջարկություն է ուղարկել գերմանական կառավարությանը: Նա չի հավաստում սակայն, որ ինչ որ դաշինք կստեղծվի այդ երկու երկրների միջև, քանզի նույնիսկ այն դեպքում, երբ տեղություններին կհաջողվի ընդհանուր համաձայնեցված մի ծրագիր կազմել, շատ դժվար կլինի դա դարձնել թուրքական կառավարությանը, որը, չնայած տեղի սալով տեղություններին, ընդունում է, որ բարեփոխումներ տեղի է անցկացնի, սակայն հոժարությամբ չի ընդունի վեց վիլայեթներին հասուկ կարգավիճակ սալու գաղափարը, որը կհանգեցնի տեղության ներքին վարչակարգի վրեժխնդարի ազդեցության արածմանը, ինչն էլ հավասար կլինի նրա ինքնավարության իրավունքների նվազեցմանը:

Գործընկերոջս խոսակցությունից հասկացա նաև, որ Գերմանիան չի ցանկանում Ռուսաստանի հետ նման դաշինք կազմել, քանզի դա կնշանակի ճանաչել ռուսական ազդեցությունը Փոքր Ասիայում, որը ձեռնուտ չէ, մինչև որ

համանման մի երաժիշի էլ չսրվի Գերմանիային: Սաացա նաև այն տղավորությունը, որ Գերմանիան, [այս հարցում] Ռուսաստանին չհակադրվելու համար, չի խուսափում ֆինանսավարկության, սակայն մտադիր է գործել այնպես, որ ընդդիմանան նրա դաժնակիցները և ոչ թե՛ ինքը:

Այս օրերին ինձ մոտ եկավ Հայոց դաստիարակների առաջնորդը և ասաց, որ հայ բնակչությունն անհամբերությամբ է սողասում խոստացված բարեփոխումներին: Նրա ուժադրությունը հրավիրեցի այն փաստի վրա, որ բարեփոխումների բանակցային գործընթացը չունի ցանկալի ընթացք, քանի որ Ռուսաստանի հասուկ միջամտությունը իրարանցում ու Եվրոպային է առաջացրել: Նրան ասացի, որ հայերի համար առավել նպաստակահարմար է անմիջական բանակցություններ սկսել թուրքական կառավարության հետ, և այդ դեպքում տեղություններն ավելի հանգիստ կարող են աջակցել նրանց, բարեփոխումների և անհրաժեշտ հսկողություն սահմանելու հարցում:

Ինձ թվաց, որ իմ մեկնաբանություններն ավելի քան համոզեցին [դաստիարակների] առաջնորդին, սակայն այն տղավորությունը սաացա, որ նրա այս ֆայլը համաձայնեցված էր ռուսական կողմի հետ:

Պարոն Մանդելցսանը երեկվա մեր գրույցի ժամանակ դարձյալ ղեկավարում էր, որ միայն անհատալ միջոցառումները կկանխեն սողասվելիք ծանր իրադարձությունները:

Գարրոնի

ԻՎԳՆՊԻՄ, Տղագրված ղիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 569:

64

Պետերբուրգում Իսայիայի դեսպանասան հանձնակատար Բորոնարոն՝  
Իսայիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Պետերբուրգ, 12 սեպտեմբերի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 560

Ներառվին հարցրի, թե որքանով են իրականությանը համադասասխանում լուրերն այն մասին, որ Ռուսաստանը Հայկական հարցի առնչությամբ դիմել է Գերմանիային՝ մտքերի փոխանակության համար: Նա դասասխանեց, որ դրա դասաճառն այն տարածություններն են, որ հասուկ հանձնաժողովում առաջ են գալիս ռուս և գերմանացի դասավորակների միջև: Ռուսական կառավարության կարծիքով առավել նպաստակահարմար է իր ծրագրերը ներկայացնել Բեռլինին և, ձեռք բերելով համաձայնություն, այն ներկայացնել հասուկ հանձնաժողովի ֆինանսմանը: Ռուսաստանը դիմել է Գերմանիային, քանզի վերջինս դաստիարակում է Թուրքիայի Երևանը, որից էլ բխում են բոլոր հիմնական դժվարությունները: Ներառվը վստահ է, որ մտքերի փոխանակության

ռուսական առաջարկի արագ ընդունումը Գերմանիայի կողմից համաձայնության կհանգեցնի: Չմանրամասնելով բնարկումների ընթացքը, [նա] ասաց, որ հիմնական խոչընդոտը կաղված է եվրոպական հսկողության հարցի հետ: Հայաստանում վիճակը միշտ տայթունավսանգ է, ինչդեռ ասաց Ներսիսյանը, և հայերի առաջնորդները մեծադեմ դիմում են Կոստանդնուպոլսի և Պետերբուրգին՝ խնդրելով անհատադ բարեփոխումներ իրականացնել:

**Բողոքնար**

ԻԱԳՆՊԻԱ, Քաղաքական շաբաթ P 1891-1916թթ., թղթադրամակ 332:

65

Իսախանի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝ Կոստանդնուպոլսում, Լոնդոնում, Փարիզում, Պետերբուրգում, Բեռլինում և Վիեննայում Իսախանի դեսպաններին

*Հոուն, 15 սեպտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 6318

Այստեղի՝ Ֆրանսիայի դեսպանասան հանձնակատարն ինձ տեղեկացրեց, որ Ֆրանսիական կառավարությունը կողջունի, եթե տերությունների միջև համաձայնություն ձեռք բերվի՝ ստեղծելու այն երաշխիքները, որոնք ամրագրված են Հայաստանի բարեփոխումների համար կազմված ռուսական և թուրքական նախագծերում: Պարոն Բիլլին<sup>41</sup> ավելացրեց, որ Ֆրանսիական կառավարությունն այս հարցի, և, ընդհանրապես, Կոստանդնուպոլսի հասուկ հանձնաժողովի որդեգրած ֆաղափականության մասին, ցանկանում է իմանալ իսախանի կառավարության դիրքորոշումը:

Պատասխանեցի դարոն Բիլլին, որ իսախանի կառավարության կարծիքով Հայաստանում անցկացվելիք բարեփոխումները ղեկ է հիմնված լինեն օսմանյան գործող օրենքների և դեսպաններին ներկայացված բարեփոխումների օսմանյան նախագծի վրա, որը ղեկ է համալրվի ռուսական նախագծի որոշումներով: Նրան համոզեցի, որ ղեկ է գործել զգուշությամբ և չհատուկ Հայաստանում արմատական այնդիսի բարեփոխումներ անցկացնել, որոնք Հայաստանի կտան առավել ընդգծված ինքնություն, ֆանգի այն կարող է վստահավոր լինել Փոքր Ասիայի ամբողջականության դաշտաման համար, որում այլ տերությունների հետ միասին, Կառավարված են նաև Իսախան և Ֆրանսիան:

Սան Ջուլիան

ԻԱԳՆՊԻԱ, Քաղաքական շաբաթ P 1891-1916թթ., թղթադրամակ 332:

66

Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարունիին  
Հոմ, 16 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր  
թիվ 6347

Բեռլինի մեր արքայական դեսպանասան հանձնակատարը հեռագրել է.

«Յագովն ինձ ասաց, որ գերմանական կառավարությունը, համաձայնությամբ գալու մեծ ցանկությամբ, բնության է առել ռուսական առաջարկը, քանզի Ռուսաստանը մշտադեմ ցանկանում է առաջ մղել Գերմանիային: Տարածայնությունները հիմնականում երկու կեսի առնչությամբ են: Մեկը վերաբերում է վերահսկիչների նշանակմանը. ըստ ռուսական կողմի՝ դա ղեկ է կատարի Եվրոպան, իսկ մեկը կարծում ենք, որ նման հարցը, որոշ վերադասումներով, ղեկ է բողոքի Թուրքիային: Յագովը կարծում է, սակայն, որ այս հարցի շուրջ հնարավոր է համաձայնության գալ:

Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ապա Յագովն անհնար է համարում ընդունել այն եղանակը, որով, ըստ ռուսական առաջարկի, Հայաստանը ղեկ է բաժանվի երկու մասի: Հայաստանը հորիզոնական կիսելու փոխարեն, որը քիչ թե շատ համընկնում է ներկայիս նահանգային վարչական բաժանման սահմաններին, Ռուսաստանն առաջարկում է այն բաժանել ուղղահայաց ձևով՝ ստեղծելով Արևմտյան և Արևելյան Հայաստաններ: Այնուհաս ինչու է, որ Ռուսաստանի նպատակների մեջ է մտնում այդ արևելյան հասվածը վաղ թե ուշ ռուսական նահանգ դարձնելը:

Ամեն դեպքում, Գերմանիան չի ընդունի որևէ արբերակ, որը դեմ կլինի Թուրքիայի ցահերին:

Վերջում Յագովն ասաց, որ Կոստանդնուպոլսում ձևավորված հասուկ հանձնաժողովն արել է այն ամենը, ինչ կարող էր, և այժմ հերթը դեսպաններին է՝ միջոցներ գտնել համաձայնության գալու համար»:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԻԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

67

Բեռլինում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Ֆրանկլինը՝  
Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
Բեռլին, 17 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր  
թիվ 716

Յագովը հավաստեցավ է, որ Գերմանիան և Ռուսաստանը համաձայնության կգան բարեփոխումների հարցի շուրջ: Նրան թվում է, որ Ռուսաստանը

համաձայն է հրաժարվել Հայաստանն արևմտյան և արևելյան մասերի բաժանելու մտքից և ընդունել է հորիզոնական բաժանումը, որն ավելի համահունչ է Թուրքիայի վարչական բաժանման հետ: Իր հերթին Գերմանիան կարող է ընդունել, որ վերահսկիչները նշանակվեն տեղաբնակների կողմից: Ամեն դեպքում Գերմանիան դեմ է, որ Թուրքիային ինչ որ բան դրսևարվի, և ցանկանում է, որ տեղաբնակների նախագիծը լինի թուրքական ծրագրերին և ցանկություններին համահունչ:

Յազովը գոհունակություն հայտնեց Ֆրանսիայի դեսպանասան հանձնակատարին Ձեր սված դասասխանի կադակցությամբ և ասաց, որ լիովին կհսում է Ձեր կարծիքը:

Ֆրանկլին

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական արք P 1891-1916թթ., թղթադանակ 332:

68

Պետերբուրգում Իսախայի դեսպանասան հանձնակատար Բորդոնարոն՝ Իսախայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
Պետերբուրգ, 19 սեպտեմբերի 1913թ.

Հեռագիր  
թիվ 564

Հնարավորություն ունեցա դարձնել Ներասովի հետ գրուցել Հայաստանի մասին: Նրան հարցրի, թե ի՞նչ կարծիք ունի ռուսական կառավարությունն այդ տեղի [Պետերբուրգում] Ֆրանսիայի դեսպանասան հանձնակատարին Ձեր գերազանցության սված դասասխանի առթիվ: Նա ասաց, որ կայսերական կառավարությունը լիովին կհսում է Փոքր Ասիայի տարածքային ամբողջականության դաժողանման իսալական կառավարության տեսակետը, և, առավել քան որևէ այլ տեղություն, քահագրգռված է դրանով: Ինչ վերաբերում է դրան հասնելու եղանակին, այստեղ ռուսական կողմը դեմ է մեր մոտեցմանը և վստահ է, որ միայն արմատական բարեփոխումները կարող են խաղաղություն հաստատել Հայաստանում և դաժողանել Փոքր Ասիայի ամբողջականությունը, մինչդեռ թույլ բարեփոխումները կունենան ձևական բնույթ և իրականում չեն փոխի դեղերի արդի վիճակը: Ներասովը վստահ լինելով, որ Կոստանդնուպոլսի ռուսական և գերմանական դեսպանների բանակցությունները դրական արդյունք կունենան, ասաց, որ Հայաստանում վիճակն իրոք ծանր է, և վերջերս էլ խոչընդոտ անկարգություններ են տեղի ունեցել Արարատի մոտակայքում:

Բորդոնարո

ԻԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 570:

69

Բեռլինում Իսալիայի դեսպան Բոլլասին՝  
Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Բեռլին, 27 սեպտեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 727

Պարոն Յագովը հաստատեց այն տեղեկությունները, որ սվել էր Ֆրանկլինին Հայաստանի բարեփոխումների շուրջ ռուսական կողմի հետ ընթացող բանակցությունների վերաբերյալ:

Ռուսաստանը հաստատեց իր արձանագրությունները և Հայաստանն արևմտյան և արևելյան շրջանների բաժանելու ցանկությունից, Գերմանիան էլ, իր հերթին, որոշ զիջումներ է կատարել իր սկզբնական առաջարկներից:

Այսպիսով, Հայաստանի բարեփոխումների նախնական ծրագրի հաստատման շուրջ Կոստանդնուպոլսի երկու դեսպանների միջև համաձայնություն է ձևավորվել, որի մասին մտադրված յուրաքանչյուրը ղապտոնապետ կզուրի Մեծ Վեզիրի հետ: Այս մասին գերմանական կառավարությունը Հռոմի իր դեսպանատան միջոցով կտեղեկացնի մեր արհայական կառավարությանը:

Բոլլասի

ԻԱԳՆՊԴԱ, Տղազրված ղիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 572:

70

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝  
Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Կոստանդնուպոլս, 27 սեպտեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 744

Պարոն Գուլկնիչը<sup>42</sup> Գիրսի անունից երեկ ինձ զաղտնաբար ծանոթացրեց այն հուշագրին, որն անցած երկուշաբթի օրը դարձրեց Գիրսը ներկայացրել էր Մեծ Վեզիրին: Այս հուշագրի բովանդակությամբ մի նոսա կդատարարվի, որը Բարձր Դուռը կուղարկի դեսպանատաններին՝ լրացնելու նախնական առաջարկները և կոնկրետացնելու այն բարեփոխումները, որ տեսք է իրականացվել Հայաստանում: Այս որոշումը կայացվել է ռուս և գերմանացի դեսպանների բանակցությունների արդյունքում, և նրանց նույն ոչ միայն հասնել գործնական արդյունքի, այլ նաև՝ չառաջացնել թուրքական կառավարության զայրույթը: Ահա այդ հուշագրի վեց կետերը.

1. Բարձր Դուռը որոշել է ղիմել տեղություններին, որոշեազի մտանք երկու վերահսկիչներ առաջարկեն Արևելյան Անատոլիայի երկու շրջանների համար: Մեկը՝ Էրզրում, Տրապիզոն, Սվազ, մյուսը՝ Վան, Բիթլիս, Խարբերդ և Դիարբե-

ֆիւր: Այդ վերահսկիչների հետ ղայմանագիրը կկնքվի հինգ արի ժամկետով, որի ավարտին տեւոյթյունները կտեղեկացվեն:

2. Բարձր Դուռն այս երկու վերահսկիչներին լիազորում է սույթանին ներկայացնել բարձրագոյն ղաւտններում և մագիստրատներում նւանակվող անձանց: Մյուս բոլոր ղաւտններում վերահսկիչները կարող են նւանակումներ կատարել ինքնուրույն:

3. Յուրաքանչյուր երջանում կլինի ընտրվի մեկ համագումար, որը բաղկացած կլինի հավասարաղես՝ մուսուլմաններից և քրիստոնյաներից:

4. Նման համամասնոյթյունը կղահղանվի նաև այդ երջանների մնացած գործառոյթներն իրականացնելիս:

5. Բարձր Դուռը մեծ տեւոյթյուններին հրավիրում է հսկելու բարեփոխումների իրականացման ընթացքը՝ իրենց ղեսղանների և տեղի հյուղասոսների միջոցով:

6. Բարձր Դուռը մտաղիր է տեւոյթյունների առաջարկներով այլ բարեփոխումներ [ևս] իրականացնել Արեւելյան Անասղիայում:

Մեծ Վեգիրը որևէ առարկոյթյուն չի արել հուււագրի առաջին չորս կետերի առնչոյթյամբ, սակայն ղետ է եղել, որ դրա հինգերող կետում հսկողոյթյան իրավունք սղի նաև հյուղասոսներին: Այս անհամաձայնոյթյան ղասձառով ղարուն Գիրը նրան չի ընթերցել հուււագրի վեցերող կետը:

ղարուն Գուլկնիչը վերջում ավելացրեց, որ ղարուն Գիրը ցանկանում է, որղեսգի ղեսղանները հավաքվեն, երբ Բարձր Դունից ստանան այդ նոսան, և հույս հայտնեց, որ հետագա հավաքներին իտարական ղասվիրակն այլես նման ընղղիմաղիր կեցվածք չի որղեգրի ոռուսական կողմի հանղետը:

Երեկ բավական երկար գոուց ունեցա փաստաբան և ղասգամավոր Չոհրատի<sup>43</sup> հետ, որին այս փուլում կարելի է հայերի առաջնորղ համարել: Ինձ ասաց, որ ողջ հայ ժողովուրղը խորատես հիասթափված է այն հանգամանքից, որ Իտարիան Գերմանիայի հետ միասին անցած գարնանն այղբան ընղղիմաղիր կեցվածք էր որղեգրել հայերի օրինական ղաիանջների նկատմամբ: Չույս հայտնեց, որ մեր մոտեցումներն այժմ դրականորեն փոխվել են և ինձ հասկացրեց, որ եթե այղղես է, աղա հայկական աղղեցիկ ուժերն ամեն ինչ կանեն, որղեսգի Իտարիան տնետարես մուտք գործի Փոքր Ասիա:

Մահմանափակվեցի այն ղասասղանով, որ այղ մասին տեղյակ կղաիեն Ձերղ Գերագանցոյթյանը: Ուտի Ձերղ Գերագանցոյթյանը խնղում են հարց առնչոյթյամբ ինձ տեղեկացնել Ձեր կարծիղը:

Մոչենիղ

ԻԱԳՆՂԴԱ, Տղաղրված ղիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 573:



71

Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանասան հանձնակատար  
Մոչենիզոյին

*Հոուն, 29 սեպտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 6615

Պատասխանում եմ Ձեր թիվ 744 հեռագրին:<sup>44</sup>

Պարոն Գիրսի անունից Ձեզ սրված տեղեկավարության առնչությամբ կարող եմ դարձնել Գուլկիչին հաղորդել, որ լուրերն ուրախ կլինեն, եթե դեղինը այնպես դասավորվեն, որ հնարավորություն ունենանք Հայկական հարցի շուրջ համաձայնության գալ:

Կարող եմ նաև ավելի բարյացակամ դիրք գրավենք նրանց նկատմամբ, քան Ռուսաստանի ներկայիս դիրքումն այլևս չի վստահում Թուրքիայի ասիական հասկածի ամբողջականությանը: Ձեր գործընկերոջ հետ շփումներում կարող եմ ի նդամս հայ ժողովրդի տեսակետներ հայտնել, բայց ուշադիր եղեմ, որ դրանք չանցնեն այն սահմանը, որը կարծի Թուրքիայի զայրույթը: Եթե նույնիսկ հայ ժողովուրդը կարող է այնպես անել, որ մենք տեսնենք ներթափանցենք Փոքր Ասիա, միևնույն է, մեզ համար ավելի կարևոր է Թուրքիայի հետ ջերմ հարաբերությունների դադարանումը:

Մենք հստակ մտակել եմք մեր բարիդրացիական ֆառափականությունը Թուրքիայի նկատմամբ, և Հայկական հարցի առնչությամբ մեր դիրքումը դրամանավորված է հենց այդ ֆառափականությունն ի ցույց դնելով: Այն ձեռքբերումները, որ ունեցանք Ադալիայի շրջանում, աղագուցում են մեր ֆառափականության արդյունավետությունը:

Սան Ջուլիանո

ԻԿԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., թրթադանակ 332:

72

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Մոչենիզոն՝  
Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 2 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 765

Պարոն նախարար,

Գուլկիչին փոխանցեցի այն ամենը, ինչ կարգադրել էիք ինձ Ձեր թիվ 6615 հեռագրով:<sup>45</sup> Նա լուրերն էր Ձեր պատասխանից և ինձ խնդրեց Ձեզ փոխանցել իր ջերմ ողջույնները:

Վստահեցնում եմ Ձերդ Պերագանցությանը, որ Հայկական հարցի բնարկ-  
ման ժամանակ, իսկ դա տեղի կունենա մոտ օրերս, խստագույնս կհետևեմ հի-  
շալ հեռագրում Ձեր սկած հրահանգներին:

Մոչեմիզո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., քղթադանակ 161:

73

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում, Բեռլինում և Վիեննայում Իսալիայի դեստաններին  
Հոմ, 4 հոկտեմբերի 1913թ.

Հեռագիր

թիվ 6755


Այստեղի՝ Պերմանիայի դեստանասան հանձնակատարն ինձ է ներկայացրել  
Կոստանդնուպոլսի գերմանական և ռուսական դեստանների մեակած՝ հայկա-  
կան բարեփոխումների նախագիծը: Այդ հանձնակատարն իր կառավարության  
անունից ինձ առաջարկեց դիմել թուրքական կառավարությանը, որդեսպի այն  
դիմի մեծ տերություններին՝ նրանցից բարեփոխումների առաջարկ ստանալու  
համար, ինչդեռ դա նախատեսված է Վանգենհայմ-Գիրս նախագծի առաջին  
հոդվածով: Այդ հոդվածով Բարձր Դուռը դեսպ է դիմի տերություններին, քանզի  
նրանք են առաջարկելու Արևելյան Անաստիայի երկու երջանների վերահսկիչ-  
ներին, որոնց հետ թուրքական կառավարությունը հիմա սարով ղայմանագրեր է  
կնքելու և տերություններից յուրաքանչյուրին տեղյակ է ղահելու այդ ղայմանագ-  
րերի ավարտի մասին: Բարձր Դուռը ղասասխանելիս, տերությունները նրան  
առաջարկելու են այն բարեփոխումները, որոնք ներառված են այդ նախագծի  
մյուս հինգ հոդվածներում:

Նման մոտեցումը նդատակ ունի համոզել Բարձր Դուռը և ոչ թե ճնշում գոր-  
ծադրել նրա վրա: Գիրսն ընդունել է այս մոտեցումը Վանգենհայմի հետ ունեցած  
բնարկման ժամանակ, վերջինս էլ համաձայնել է ընդունել նախագծի երրորդ  
հոդվածը՝ կարծելով, որ Բարձր Դուռը չի ընդունի այդ հոդվածը, որով նախա-  
տեսվում է, որ յուրաքանչյուր երջանում դեսպ է լինի ընտրվի մեկ համագումար,  
որը բաղկացած կլինի հավասարադես մոսուլմաններից և քրիստոնյաներից:

Այս հանձնակատարն ասաց, որ Վանգենհայմը ղաստասակամություն է  
հայտնել սրա հիման վրա բանակցություններ սկսել Թուրքիայի հետ, եթե Իսալի-  
ան և Ավստրո-Հունգարիան ևս սան իրենց համաձայնությունը:

Կարծում եմ, նախադես դեսպ է վստահ լինենք, որ Թուրքիան ինքնակամ  
կընդունի տերությունների այդ առաջարկը և այն չի համարի վիրավորական,  
քանզի, կարծում եմ, Եռյակ դաշինքի քահերից է քխում այս ղահին Կոստանդ-  
նուպոլսի կառավարությանը չվիրավորելը:

Սան Ջուլիանո



74

Բեռլինում Իսալիայի դեսպան Բուլլասին՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Բեռլին, 6 հոկտեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 752

Ինչդեռ Ձեր գերազանցությունը Հայաստանի բարեփոխումների մասին սատել եր այդտեղի [*Հռոմում*] Գերմանիայի դեսպանասան հանձնակատարին, Յագովի հետ խոսակցության ժամանակ նեցցի, որ Ձեր գերազանցությունը նդասակահարմար է համարում նախադես իմանալ Թուրքիայի վերաբերմունքն այդ հարցի շուրջ: Յագովն անմիջադես կառչեց այս մտքից և փոխադարձաբար վստահություն հայտնեց, որ իր կառավարությունը երբեք չի ցանկանում զնալ այնդիսի քայլի, որը կվնասի Թուրքիային: Միննույն ժամանակ նա ավելացրեց, որ լավ կլինի, եթե Թուրքիային մեղմ կերդով համոզենք, որ նա չմերժի արդյունավետ բարեփոխումների ծրագիրը:

Բուլլասի

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., թղթադանակ 332:

75

Կոստանդնուդոլսում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Մոչենիզոն՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Թերաքիա [Կոստանդնուպոլիս], 6 հոկտեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 772

Իմ թիվ 744 հեռագրով<sup>46</sup> Ձեր գերազանցությանն արդեն ներկայացրել եմ այն իրավիճակն ու սրամադրությունները, որ սիրում եմ Հայկական հարցի ադազա քննարկման շուրջ: Այժմ դրանց ցանկանում եմ ավելացնել այն հուզումնալից վիճակը, որ սարբեր աղբյուրներից ինձ հասած տեղեկությունների համաձայն սիրում է հայերի շրջանում, և որը կարող է ցավալի իրադարձությունների առիթ հանդիսանալ:

Հայերն անհամբեր են և արդեն հոգնել են քառասնամյա այս երկար սղասումից, որի ընթացքում օսմանյան կառավարության և Եվրոդայի խոստումներն ընդամենը մնացել են թղթի վրա: Ներկա քննարկումների և առկա բարեփոխումների ծրագրի անարդյունավետությունից խուսափելու համար հայերը մտադիր են մի մեծ ադասամբություն հրահրել՝ զհսակցելով, որ այն նոր ջարդերի առիթ կհանդիսանա:

Այս միտքը նրանց չի վախեցնում և զերադասում են այդ սարբերակը, քան իրերի ներկա վիճակի ձգձգումը, որը Հայոց դասրիարքարանի սվյալներով սանում է ազգի դանդաղ, քայց հսակ ոչնչացմանը:

Ահազանգում են Ձերդ Գերազանցությանը, որ այդ արդասամբության հե-  
սկանքներն անկանխաստեսելի կարող են լինել:

Ուսի կարծում են՝ կարելի է շատ չընդդիմանալ ռուսական նախագծի այն  
դրոյքներին, որոնք տեղ են գտել ռուս-գերմանական հուշագրում և որոնք դարձնում  
Գիրքը հույս ունի ներկայացնել դեսպաններին առաջիկա հավաքին:

Մոչենիզո

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., թղթադանակ 332:

76

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում, Լոնդոնում և Պետերբուր-  
գում Իսալիայի դեսպաններին

*Հոռն, 6 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 6821

Այստեղի՝ Գերմանիայի դեսպանասան հանձնակատարն այսօր իր կառա-  
վարության անունից ցանկացավ իմանալ, թե արդյոք ողջունում ենք հայկա-  
կան բարեփոխումների հարցի շուրջ թուրքական կառավարության հետ Գիրսի և  
Վանգենհայմի ձեռնարկած գործողությունները: Բնականաբար նրան դասա-  
խանեցի, որ ողջունում ենք:

Բացառադեպ Ձեզ տեղյակ դառնալու համար ավելացնենք, որ շատ ուրախ ենք,  
որ Իսալիան գոնե այս դառնիկ այդ նախաձեռնությունը թողնում է ուրիշներին:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեսպանատուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

77


Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում, Լոնդոնում և Պետերբուր-  
գում Իսալիայի դեսպաններին

*Հոռն, 6 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 6823

Այստեղի՝ Ռուսաստանի դեսպանն այսօր ինձ հետ զրուցեց հայկական բարե-  
փոխումների և դրանց նկատմամբ մեր այսչափ սառը վերաբերմունքի մասին:  
Նրան հստակ դասախանեցի, որ մենք չենք ցանկանում այնպիսի դիրք գրա-  
վել, որը թեկուզ փոքր ինչ ոչ բարեկամական կլինի Թուրքիայի նկատմամբ:  
Բանգի ցանկանում ենք նրա հետ ունենալ լավ հարաբերություններ: Միևնույն  
ժամանակ նեղեցի, որ հավասարաբար ենք, որ ի նդաս հայերի մեկված բարեփո-  
խումների կիրառումն անհրաժեշտ և հրատաղ է, և այն բխում է հենց Թուրքիայի





ինձ արդեն ասել է, որ հարգելով հանդերձ Թուրքիայի իրավունքները, ղեկս է ազդի նրա վրա, որդեսզի վերջինս չհակադրվի բարեփոխումների ծրագրին:

Յիմերմանն<sup>47</sup> այսօր հաստատեց, որ իր կառավարությունն ընթացքի մեջ է դառնում այն ծրագրերը, որի մասին նշել էր Կոստանդնուպոլսի մեր դեստանասան հանձնակատարը: Վանգենհայմը, որ սկզբնաղես ցանկանում էր, որ բարեփոխումներն իրականացվեն միայն Գերմանիայի և իր դաճնակիցների նախաձեռնությամբ, համոզվել է, որ հնարավոր չէ Հայկական հարցը բնարկել առանց Ռուսասանի:

Յիմերմանն ինձ վստահեցրեց, որ դեստանների հավաքից առաջ, նախքան Կոստանդնուպոլսի իրենց ներկայացուցիչներին հրահանգներ տալը, դրանց մասին ինձ տեղյակ կդառնի, քանզի կարող է գործել Իսալիայի հետ համաձայնեցված:

Բոլլասի

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաքական արք P 1891-1916թթ., թղթադանակ 332:

80

Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝ Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստան Գարոնիին  
*Հոռն, 8 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 6861

Պարոն Ավառնան ցանկացել էր իմանալ Ավստրո-Հունգարիայի կառավարության կարծիքը հայկական բարեփոխումների ռուս-գերմանական նախագծի վերաբերյալ: Պարոն Մաֆիոն<sup>48</sup> ղաճասխանել էր, որ ավստրո-հունգարական կառավարությունը չի ընդդիմանում այդ նախագծին, քանզի վստահ է, որ բարեփոխումների այդ ծրագիրը ոչ մի կերպ չի վնասում Թուրքիայի շահերին:

Ես նույնդես կիսում եմ Վիեննայի կառավարության կարծիքը:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

81

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստանասան հանձնակատար Մոչենիզոն  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Կոստանդնուպոլս, 9 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր  
թիվ 787

Գուլկեհչը կտրականաղես մերժեց, որ Վանգենհայմն իր կամ Գիրսի հետ զրույցում արտահայտած լինի այն կարծիքը, որի մասին հաղորդում եմ Ձեր 6823

հեռագրում:<sup>49</sup> Նա ինձ ասաց, որ նման գնահատական նա տեսել է Բեռլինի արագործնախարարությունում տեղի ունեցած մի ֆինանսական ժամանակ ռուս դեսպանի զեկույցում, որի կրկնօրինական ուղարկվել է այստեղի Ռուսասանի դեսպանատնում:

Անդրադառնալով Վանգենհայմին վերագրվող՝ իր կառավարության անուցից արած այդ արտահայտությանը, կարծում եմ, որ որևէ կերպ չարժե արձագանքել դրան: Այժմ փորձում եմ ամեն ինչ անել, որդեսպի չեզոքացնեմ նրա ընդդիմադիր կեցվածքը մեր նկատմամբ:

Մոչենիգո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրինյի դեսպանատն 1829-1937թթ., թղթադանակ 161:

82

Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան Գարոնիին  
Հռոմ, 18 հոկտեմբերի 1913թ.  
Հեռագիր  
թիվ 7203

Վիեննայի մեր արհայական դեսպանը հեռագրել է.

«Անցած չորեքշաբթի զրույց ունեցա տեղի կառավարության մի գործընկերոջ հետ, որն ինձ ներկայացրեց Պալլավիչինիից ստացված հեռագրի բովանդակությունը: Ըստ դրա՝ անցած սաբիտերի համեմատությամբ, Հայաստանում բռնությունները չեն ավելացել: Կոստանդնուպոլսի դեսպանների նոր հավաքի մասին ևս ստույգ առաջարկ չի եղել, սակայն, ռուս-գերմանական նախագիծը կփոխանցվի բոլորին՝ վերամշակելու և թեթևացնելու համար:

Կայսերական և արհայական կառավարությունները ստեղծված իրավիճակում նդասակահարմար են զգնում առայժմ ձեռնդրահ մնալ: Գերմանիայի և Ռուսասանի դեսպանները, եթե համաձայնվեն, որ իրենց նախագծում փոփոխություններ մտցվեն, ադա այդ նոր սարքերակը չի հանդիդդի Ավստրո-Հունգարիայի առարկությանը»:

Կարծում եմ, որ մեզ համար էլ է նդասակահարմար առայժմ ձեռնդրահ մնալը:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրինյի դեսպանատն 1829-1937թթ., թղթադանակ 161:

83

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստանասան հանձնակասար Մոչենիզոն՝  
Իսալիայի արսափն գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 20 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 822

Ռուսասանի և Գերմանիայի ֆայլերը որևէ արդյունք չսվեցին: Գիրսն ու Վանզենհայնը, չնայած նրան, որ ընդհանուր առմամբ նորացրել էին Բարձր Դռանը ներկայացվելիք իրենց առաջարկը, սակայն դեռևս նրա հետ չեն կարողանում համաձայնության գալ այն ձևաչափի շուրջ, որով Բարձր Դռուը դեֆ է նախաձեռնություն ցուցաբերի: Քննարկումները գնում են երկու ուղղությամբ՝ կամ այդ առաջարկությունը կլինի օսմանյան կառավարության կողմից, որը դաճոճնադես կողմի սեղի՝ արտերկրի դիվանագիտական ներկայացուցչություններին, և որով նրանց կառաջարկվի համալրումներ կասարել բարեփոխումների իր նախնական սարբերակներում, կամ օսմանյան կառավարությունը կսղափի, որդեսգի իրենք սերությունները դիվանագիտական մի հավաք անցկացնեն և միասին համանման մի նոսա ուղարկեն Բարձր Դռանը:

Երբ սկսվեն քննարկումները մեծ դժվարություններն անխուսափելի կլինեն: Կարելի է հաստատել, որ սերությունների կողմից մեծ սխալ էր բարեփոխումների համար ընդունել փոխգիջումային այն սարբերակը, որ մասնանշվում են հայերի միևիմում դախանջները միայն, և կարևորվում է Թուրքիային չնեղացնելու գործունը: Նման մոտեցումը խորք է այս կառավարության մասծելակերդին և սովորյթներին, նրանք միևնույն է ցանկացած հարցի շուրջ շուկայաբար սակարկում են: Ելնելով դրանից՝ միգուցե ավելի ճիշտ կլինեն նրան ներկայացնել Մանդելշեսամի ծրագիրը և քննարկումների արդյունքում՝ իջնեցնել և հասցնել ռուս-գերմանական ծրագրի ներկայիս վիճակին, որի ընդունումն արդեն ավելի հավանական կլինեն:

Մոչենիզոն

ԻԱԳՆՊՂԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., քրթադանակ 332:

84

Իսալիայի արսափն գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Լոնդոնում, Փարիզում և Պետերբուրգում Իսալիայի դեստաններին

*Հոնմ, 20 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 57706/360, 57707/960, 57708/218

Պարոն դեստան,

Ինչդես և սղասվում էր, ռուսական կառավարության կողմից առաջարկված հայկական բարեփոխումների նախագիծը՝ «Մանդելշեսամի ծրագիրը»,



հանձնելու համար Կոստանդնուպոլսում ձևավորված հասուկ հանձնաժողովը լուծարվեց, առանց գործնական արդյունքի հասնելու: Հենց սկզբից առաջ եկան երկու ընդդիմադիր կողմեր, որոնք այդպես էլ մինչև վերջ չկարողացան համաձայնության գալ: Եռյակ համաձայնության սերությունների ներկայացուցիչները, ելնելով բարեկամական դիրքերից, մնացին Ռուսաստանի հետ, իսկ Եռյակ դաշինքի ներկայացուցիչներն իրենց հերթին համաձայնեցված կարգով Եւրոպայի ռուսական նախագծին հակադրում էին թուրքական նախագիծը և 1895թ. այն հուշագիրը, որ մշակվել էր Կոստանդնուպոլսի դեստանների և ընդունվել էր թուրքական կառավարության կողմից, չնայած այն հանգամանքին, որ այն չէր կիրառվել:

Այս հանձնաժողովի անհաջողության իրական դրամատիկ արտահայտված է ինչ ներկայացված գերմանական հուշագրում, և, իմ կարծիքով ևս, դրա հիմնական դրամատիկ այն էր, որ Մանդելսթամի ծրագիրը նրա սակ ուներ հայկական վիլայեթների միավորումով ստեղծել ինքնավար վարչական մեկ միավոր, որը, սակայն, վստահավոր նախադեպ կարող էր հանդիսանալ Թուրքիայի ասիական մասի ամբողջականության դաշինքի համար, որով Եւրոպայում կարող էր ստեղծվել նման թե՛ մեկ և թե՛ մյուս սերությունները: Այս մտավախությունն էր, թերևս, (բոլոր սերությունների, այդ թվում Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների՝ չնայած, վերջիններս արտադրուս կողմ էին Մանդելսթամի ծրագրին), այն ծանրակշիռ դրամատիկ որդեկան (նրանք) արտահայտեին այն կարծիքը, որ ռուսական նախագիծը չէր կարող իրագործվել առանց մեծ դժվարությունների և վստահի, որ առաջ կգային Բարձր Դռան հակադրության արդյունքում: Այս մտավախությունից ելնելով, ֆրանսիական կառավարությունը նախաձեռնություն ցուցաբերեց: Օգոստոսի 16-ին նրանց դեստանասան հանձնակատարն ինչ սեղեկացրեց, որ իր կառավարությունը ցանկանում է, որդեկան համաձայնություն ձեռք բերվի սերությունների միջև՝ ադապտացիայի համար այն երախտիկները, որ նշված են թե՛ ռուսական և թե՛ թուրքական նախագծերում, և խնդրում էր, որ հարցի առնչությամբ նրան հայտնեն Նորին Գերագանցության կառավարության կարծիքը: Այդժամ հնարավորություն ունեցա նրան հայտնելու իմ այն համոզմունքը, որ ավելի նրա սակահարմար է գործել չափազանց զգուշությամբ և խոհեմությամբ, և նախքան ռուսական նախագծի արմատական բարեփոխումներն ընդունելը, դեմ է հաշվի առնել դրանց իրագործման այն անբավարար միջոցները, որ նախատեսում է թուրքական ծրագիրը: Ուստի արմատական բարեփոխումների ցուցաբերումը ընդունումը կարող է մեծադեպ վստահել Թուրքիայի ասիական մասի ամբողջականությունը, որի դաշինքի համար Եւրոպայում կարող է Իսախան, ինչդեպ և՛ Ֆրանսիան:

Կոստանդնուպոլսի հանձնաժողովի անհաջողությունից և ռուսական նախագծի լուծարման մեծամասնից հետո, Ռուսաստանի և Գերմանիայի դեստանների, ինչդեպ նաև՝ Բարձր Դռան միջև մի նոր ծրագիր մշակելու համար սկսվեցին

նոր բանակցություններ, հազվի առնելով այն բոլոր առարկությունները, որ լավել էին հանձնաժողովի նիստերի ժամանակ: Այդ բանակցությունների արդյուն-  
 փուն ծնվեց մի հուշագիր, որը կից ներկայացնում են Ձեր ուժադրությանը:<sup>50</sup> Այն  
 սեղանների 27-ին ինձ ներկայացրեց այստեղի Գերմանիայի դեսպանասան  
 հանձնակալաբար: Նույն բովանդակությամբ հաղորդագրություն էր ուղարկվել  
 նաև Վիեննայի կառավարությանը, որով գերմանական կառավարությունը,  
 ելնելով դաճակցի դարձակություններից, հայցում էր լիազորություն՝ Կոս-  
 սանդնուդոլիսի իր ներկայացուցչին հանձնարարելու, որ այս հարցի շուրջ բա-  
 նակցություններ սկսի օսմանյան կառավարության հետ, եթե, իհարկե, Շոյակ  
 դաճինքի կողմերը համաձայն են:

Այդ նախագիծը, ինչդեռ ինձ ներկայացրեց գերմանական հանձնակա-  
 արը, Վանգենհայմի և Գիրսի միջև երկկողմանի զիջումների արդյունք է: Ըստ  
 այդ, Վանգենհայմն ընդունել է նախագծի երրորդ հոդվածը՝ իմանալով, որ  
 այն կմերժվի Բարձր Դռան կողմից: Ըստ դրա՝ երկու շրջաններից յուրաքանչ-  
 յուրում կլինի ընտրվի մեկ համագումար, որը բաղկացած կլինի հավասարա-  
 դես մուսուլմաններից և քրիստոնյաներից: Իր հերթին, Գիրսը հրաժարվել է  
 հայկական ինքնավար մեկ վարչական միավոր ստեղծելու գաղափարից, որը  
 դեռ է ունենար քրիստոնյա կառավարիչ, և համաձայնվել է երկու շրջանների  
 գաղափարին, որոնց վերահսկիչները դեռ է նշանակվեն սուլթանի կողմից:  
 Մյուս զիջումը, որ կասարել է Ռուսաստանը, վերաբերում է բարեփոխումները  
 ներկայացնելու ձևաչափին: Ըստ այդ, Թուրքիային խորհուրդ է տվում դիմել  
 սերություններին՝ բարեփոխումներ առաջարկելու համար, սա ամփոփված է  
 առաջին հոդվածում, որից հետո, որդես դասասխան, սերությունները հասուկ  
 նոտայով կառաջարկեն մյուս հինգ հոդվածները: Բանակցությունները Բարձր  
 Դռան հետ դեռ էր դաճողանեն համոզելու գաղափարը և ոչ թե ձնելու:

Գիրս-Վանգենհայմ նախագիծն, այսդիսով, հրաժարվում է Ռուսաստանի  
 նախկին արձանական փոփոխությունների առաջարկից և համալրումներով  
 ու փոփոխություններով, ամփոփում է Շոյակ դաճինքի, այդ թվում՝ Նորին  
 Գերագանցության կառավարության ճեսակետները:

Այս նոր նախագծի մասին իմ կարծիքը հայտնեցի գերմանական հանձնա-  
 կասարին և միաժամանակ այն ուղարկեցի Բեռլինի և Վիեննայի կառավա-  
 րություններին: Ասացի, որ նախքան Թուրքիային դիմելը նոտասակահարմար է  
 վստահ լինել, որ նա հոժար կերողով կընդունի սերությունների առաջարկը, ու-  
 դեռ էր խոսափենք նրան վիրավորելուց, քանզի այն ձեռնու չէ Շոյակ դաճին-  
 քի սերություններին՝ ընդհանրադես և Իսալիային՝ մասնավորադես:

Մեր դեսպաններ Բոլլաշին և Ավառման ինձ հեռագրեցին և հայտնեցին, որ  
 իմ այս մոտեցումը լիովին կիսում են գերմանական և ավստրո-հունգարական  
 կառավարությունները: Յագովն ավելացրել էր, որ հազվի առնելով Թուրքիայի  
 ավանդական մոտեցումները, նրա հետ դեռ էր կիրառենք «քաղցր համոզելու»

հաղափականություն, քանզի հակառակ դարազայում օսմանյան կառավարությունը կընդդիմանա ընդունել բարեփոխումների ցանկացած խոհեմ նախագիծ, որն էլ Ռուսաստանին լավ հնարավորություն կսա նորից խիստ կեցվածք ընդունել՝ մասնանցելով Հայաստանում օրեցօր վասթարացող իրավիճակը: Ուստի՝ Կոստանդնուպոլսի գերմանական դեստանը ռուս դեստանի հետ առավել շահավետ համագործակցելու կարգադրություններ կսանա՝ հրաժարվելով մենակ գործելու մտադրությունից: Այդ կարգադրությունների մասին ինձ կսեղեկացվի:

Այս չափազանց կարևոր հարցի հետագա զարգացումների մասին Ձեզ տեղյակ կդառնան:

Ման Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Տոպգրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 579:

85

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստանասան հանձնակատար Մոչենիզոն՝ Իսալիայի արտաքին գործերի նախարար Ման Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 21 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 829

Պարոն Վանզենհայնը, որ երեկ բավականին երկար զրույց էր ունեցել Մեծ Վեզիրի հետ, ինձ ասաց, որ թուրքական կառավարությունը, զսնվելով Ադրիանապոլսի գրավման և սկսված թուրք-հունական բանակցությունների ազդեցության ճակ, մտադիր է անսարքերության մասնել հայկական բարեփոխումներին առնչվող մեծ տեղությունների խորհուրդները: Վանզենհայնը նրան ասել է, որ ռուս և գերմանացի դեստանները եկել են փոխհամաձայնության՝ հապի առնելով Թուրքիայի բոլոր առարկությունները: Բացի այդ, վերջին շրջանում զգում են, որ ռուս դեստանը մի տեսակ թուլացրել է հայերի ծանր վիճակի մասին իր դիտարկումները և, բնականաբար, այդ հանգամանքը կարելի է առնչել ընթացող ռուս-թուրքական բանակցություններին, որոնք չափազանց սահուն են ընթանում:

Մոչենիզոն

ԻԱԳՆՊԴԱ, Տոպգրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 580:

86

Պետերբուրգում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Բորդոնարոն՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Պետերբուրգ, 22 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 1624/517

Պարոն նախարար,

«Վեչերնեյե վրեմյա» թերթի մի հոդվածի համաձայն՝ հայկական վեց վիլայեթների բարեփոխումների հարցը քննարկվել է Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ, որը տեղի է ունեցել վերջերս Սազոնովի՝ Փարիզ կատարած այցելության ժամանակ: Այդ քննարկումների արդյունքում մեկտեղվել է ռուս-ֆրանսիական մի նախագիծ, որին կմիանա նաև Անգլիան: Այդ նախագիծը հիմնականում ներառում է 1895թ. սերտությունների կողմից Թուրքիային առաջարկված ծրագիրը, որով Հայաստանում անցկացվելիք բարեփոխումները տեղի է կատարվեն միջազգային հսկողությամբ: Նույն թերթում նշվում է, որ Բեռլին կատարվելիք այցի ժամանակ Սազոնովը կջանա, որ Գերմանիան ևս ընդունի այդ նախագիծը:

Բորդոնարո

ԻԱԳՆՊԴԱ, Տղազրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 581:

87

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Մոչենիզոն՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 27 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 849

Պարոն Վանզենհայմն ինձ ներկայացրեց այն հայտարարությունը, որ Բարձր Դուռը հղել է նրան և դարձնում Գիրսին, որպես տրասախան այն հուշագրի, որ ներկայացվել էր իրեն: Այդ հայտարարության մեջ չի խոսվում նշված այն հիմն հոդվածների մասին: Թուրքական կառավարությունը սահմանափակվում է հայտնելով, որ սրամադրված է բարեփոխումներ անցկացնել և վստահեցնում է սերտություններին, որ հաշվի կառնվեն նրանց խորհուրդները: Վանզենհայմն ասաց, որ օսմանյան կառավարությանն այլ տրասախան չալ ստիղելու հնարավորություն չէր տեսնում: Թուրքական կառավարությունն, անուշուր, օգտվում է այն տրասախանություններից, որ վերջին երջանում առկա են սերտությունների միջև [այդ] հարցի առնչությամբ, դրան ավելացավ նաև Ադրիանապոլսի գրավումը թուրքերի կողմից, որն ավելի վստահություն հաղորդեց վերջինիս:

Մոչենիզո

ԻԱԳՆՊԴԱ, Տղազրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 583:

88

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Մոչենիզոն՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 30 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 854

Այսօրվա մամուլն ընդհանուր առմամբ վատ է արձագանքել դարձնալով Սազոնովի հայտարարություններին, դրանք գնահատելով ոչ ժամանակին, քանզի հնչել են ռուս-թուրքական բանակցությունների ավարտի նախօրյակին, որոնք կարող էին Ռուսաստանի համար մեծ զիջումներ ադախովել և, նույնիսկ, լավացնել երկու երկրների միջև հարաբերությունները: Բոլոր թերթերն անդրադարձել են Բարձր Դռան՝ ռուս-գերմանական հուշագրին սկսած դասասխանին: Գրում են, որ չնայած Թուրքիան կանցկացնի բարեփոխումներ, և, միգուցե, այդ աբխասաններին կներգրավի նաև եվրոպացի մասնագետներին, բայց երբեք չի հանդուրժի արտերկրի միջամտությունը, քանզի բավական փորձ ունի հասկանալու, թե այդ միջամտությունն ինչ է նշանակում:

Պարոն Գիրսը չի դատարարվում հարցն այսպես թողնել, իսկ հայկական քաղաքացիներն էլ սկսում են աղաչանաբանությունները: Առաջին ցավոտ ընդհարումն արդեն տեղի է ունեցել Արա Բագարում, ուր կան զոհեր և վիրավորներ: Հավասարիմ մնալով Ձերդ Գերագանցության կարգադրություններին՝ հարցի առնչությամբ չեմ խոսում Մեծ Վեզիրի հետ և չեմ խոսի, մինչև Վանզենհայմն ինձ չառաջարկի այդ անել: Ավստրիայի իմ գործընկերներն ասաց, որ ինքն էլ ունի նույն կարգադրությունը:

Մոչենիզոն

ԻԱԳՆՊԻԱ, Տղազրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 584:

89

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Մոչենիզոն՝  
Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 30 հոկտեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 857

Վասահելի աղբյուրներից ինձ տեղեկացրին, որ Թալեաթ բեյը երեկ չէ անցյալ օրը ֆինանսների նախարարության ֆինանսական հանձնաժողովից հաջորդ չորսամսյակի համար անտրասելիորեն դադարեցրել է 180 հազար լիր, որոնք հայկական վիլայեթներում վերականգնի ժանդարմերիան: Գումարը նրան տրամադրվել է, և, նույնիսկ, նման ծախսը տեղ է գտել նաև հաջորդ տարվա բյուջեում:

Ներքին գործերի նախարարի այս ֆայլի նդասակն է՝ կարողանալ աղացուցել սերություններին, որ ասիական Երջանների բարեփոխումներն աղենն սկսված են, և որ սերությունների միջամտության կարիքն այլևս չկա:

Մոչենիզո

ԻԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 584:

90

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեստանասան հանձնակասար Մոչենիզոն՝ Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին

*Կոստանդնուպոլիս, 2 նոյեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 861

Գիրսը վստահաբար ասաց, որ Ռուսասանը մտաղիր չէ թույլ տալ, որ հայկական բարեփոխումների հարցը փակվի, ուստի լղասրասվում է մինչև վերջ Բարձր Դռանը ներկայացնել բարեփոխումների ծրագիրը: Նա կրկնեց, որ սերությունները ռուսական այս նախաձեռնության մեջ չղեկս է սեսնեն Թուրքիայի ասիական մասի ամբողջականության խաթարման վսանգ, ֆանգի, ի սարբերություն այլ սերությունների, Ռուսասանն այդ սարածֆներում դեռևս չի ձևվորել այնղիսի Եահեր, որոնք նրան ներխուժելու հնարավորություն սան: Եթե Ռուսասանը դիմում է բարեփոխումներ անցկացնելու լղահանջով, աղա դա նրա համար է, որ ցանկանում է, որղեսգի այդսեղ չխաթարվի հանրային կարգուկանոնը և եթե ցանկանում է, որղեսգի բարեփոխումներն անցնեն եվրողական հսկողությամբ, աղա վսահ է, որ միայն այդ ճանաղարհով դրանք աղյունավե սերղով կիրագործվեն: Ավելացրեց, որ օսմանյան կառավարության կողմից հայկական Երջաններում ժանղարմերիայի վերականգնումը նղասակահարմար չի համարում, ֆանգի հայերին անհրաժեես է բնականոն վարչարարություն, այլ ոչ թե՝ բնաջնջում:

Եգրափակելով՝ հույս հայսնեց, որ սերությունները լղես է հավասան ռուսական կառավարության անկեղծությանը. նա չի ցանկանում, որ հայերի նոր խմբաֆանակ մենի ռուսական սահման, ֆանգի այդսեղ հայերը մեծ թիվ են կազմում, չի ցանկանում ընղայնել սահմանները, ֆանգի դրանք առանց այդ էլ անսահման են, այլ ցանկանում է, որ իր սահմանների մոս խաղաղություն լինի: Եթե Օսմանյան կայսրության մասնասման հարցը բարձրացվի, ասաց Գիրսը, աղա ոչ թե Հայասան կզնանք, այլ՝ ողղիղ Կոստանդնուպոլիս:

Մոչենիզո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթաղանակ 161:

91

Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Պետերբուրգում Իսալիայի դեսպանասան հանձնակատար Բորդոնարոյին  
*Հոռն, 6 նոյեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 60570/233

Պարոն հանձնակատար,

Պատիվ ունեն սեղեկացնել, որ ստացել եմ հոկտեմբերի 22-ի Ձեր թիվ 517 հեռագիրը:<sup>51</sup> Այն սեղեկությունները, որ հաղորդում եմ, հղում կատարելով «Վեչերնեյե վրեմյա» թերթին, անուո՛ւս, կարևոր նշանակություն ունեն, սակայն դրանք բովանդակային առումով չեն համադասասխանում Կոստանդնուպոլսի մեր արհայական դեսպանասանից ինձ հասած սեղեկություններին:

Այդ սեղեկությունները չեն համընկնում «Վեչերնեյե վրեմյա» թերթի սեղեկություններին: Տրամաբանական չէ, որ Ռուսաստանը, հայկական բարեփոխումների հարցում համաձայնության գալով Գերմանիայի հետ և ներկայացնելով մի ծրագիր, միաժամանակ, նույն հարցի առնչությամբ փորձի առանձին տղամանավորվածություն ձեռք բերել Ֆրանսիայի հետ: Բացի այդ, Բարձր Դռան հետ կատարվող հայերն առավել դրական ելք կադախովեն այն դեղում, երբ դրանք ներկայացնի ռուս-գերմանական կողմը՝ ադախովելով բոլոր մեծ սերությունների մասնակցությունը դրանց, քան՝ ռուս-ֆրանսիականը, որն, ընդամենը, Եռյակ համաձայնության երկրների շրջանակում է ամփոփվում: Ուստի հիմք ունեն կարծելու, որ «Վեչերնեյե վրեմյայի» նորությունները զերծ են հիմփից: Հայտնի է, որ ռուս-ֆրանսիական բանակցություններում քննարկվել են Հայաստանին առնչվող հարցեր, բայց ոչ՝ բարեփոխումների հարցը, որն արդեն համաձայնեցված է ռուս-գերմանական հուճադրով:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Տղագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 586:

92

Իսալիայի արժափն գործերի նախարար Սան Ջուլիանոն՝  
Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպան Գարոնիին  
*Հոռն, 10 նոյեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 7600

Բեռլինի մեր արհայական դեսպանասան հանձնակատարը հեռագրել է.

«Ցիմերմանն ինձ ասաց, որ Գերմանիան ևս դժգոհ է Թուրքիայի դասասխանից և մտադիր է շարունակել հարցի քննարկումը: Նա մտադիր է Ռուսաստանի հետ դարձյալ համաձայնեցված գործել, որդեսգի վերջինս միայնակ չդիմի Թուրքիային:

Ավելացրեց, որ Վանգենհայմին կարգադրված է բանակցությունների ընթացքի մասին սեղյակ դառնել Կոստանդնուպոլսի մեր դեստանասանը»:

Սան Ջուլիանո

ԻԱԳՆՊԴԱ, Թուրքիայի դեստանասուն 1829-1937թթ., թղթադանակ 161:

93

Պետերբուրգում Իսալիայի դեստանասան հանձնակատար Բորդոնարոն՝  
Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Պետերբուրգ, 12 նոյեմբերի 1913թ.*

Հեռագիր

թիվ 1790/974

Պարոն նախարար,

Անդրադառնալով Ձեր թիվ 6057/233 հեռագրին,<sup>52</sup> հայտնում եմ Ձերդ  
Գերազանցությանը, որ «Վեչերնեյե վրեմյա» թերթի սեղեկությունները ռուս-  
ֆրանսիական բանակցությունների ընթացքում հայկական բարեփոխումների  
հարցը ֆննարկելու առումով ինձ ևս անհիմն են թվում:

Մի քանի օր առաջ հանդիպեցի դարոն Ներասովին և հայկական բարեփո-  
խումների առնչությամբ նա լողեց, որ ֆննարկումներն ընթանում են բացառա-  
դեպ ռուս-գերմանական հուշագրի հիման վրա, որին մյուս սերությունները սվել  
են իրենց համաձայնությունը:

Բորդոնարո

ԻԱԳՆՊԴԱ, Ջաղախական Եսրբ P 1891-1916թթ., թղթադանակ 332:

94

Տրադիզոնում Իսալիայի գլխավոր հյուղասոս Գորրինին՝  
Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Տրապիզոն, 17 նոյեմբերի 1913թ.*


Հեռագիր

թիվ 1357/139

Պարոն նախարար,

Պատիվ ունեն Ձերդ Գերազանցությանը սեղեկացնելու, որ երեկ թուրքական  
«Գոլ Ջեմալ» շոգենավով Կոստանդնուպոլիս ուղևորվեց Ամենայն Հայոց  
Կաթողիկոսը, որին ճանադարհ դրեցին զինվորական հանդեսով հայկակա  
համայնքի, հայկական դրոշմների առակերների ու հոծ բազմության ներկա  
յությամբ:

Այլ հյուղասոսների և բարձրասիճան դաւսոնյաների հեւ միասին, ես ևս  
նավ բարձրացա՝ ողջունելու Նորին Օծությանը. նա չափազանց շոյված էր  
Արարողությանը մասնակցում էին նաև հունական դասրիարը, բողոքական  
միսիոներները և Եաւ մուսուլմաններ:



Աղեն բավական երկար ժամանակ այստեղի հայ առաքելականների և հայ կաթոլիկների միջև առկա էին խորը սարաձայնություններ: Հայկական երկու եկեղեցիները մեծադեմ կեանքում ու սղառնում էին միմյանց, թե կհանդես ու կփակեն մյուսի դռրոցները:

Վեհափառը ջանք չսնայեց՝ լուծելու այս խնդիրները, և սարաձայնությունները հայ առաքելական ու կաթոլիկ եկեղեցիների միջև վերջնականապես վերացան: Այս ամենն, անուշ, չի կարելի վերագրել [միայն] նրան, սակայն սեղի ունեցան հենց նրա ներկայության ղայմաններում՝ որդես արդյունք իր սված խրատների:

Վեհափառը սեղի հարուստ հայերից նաև հսկայական նվիրատվություններ ստացավ: Ինչ ասաց, որ գումարը հասնում է երեք հազար թուրքական լիրի, այսինքն՝ մոտ 70 հազար ֆրանկի, որոնցով նա կզմի Մայր Տաճարը և կամբարաղնդի առաքելական համայնքին դասկանող այլ հաստատությունները:

Մտանք են սեղական բնույթի վերջին նորությունները, որ մեծ վստահություն և հույսեր են ներժնչել հայ բնակչությանը: Ինչ վերաբերում է Վեհափառի այն մտադրություններին, որ Բարձր Դռան հետ հանդիպման ժամանակ կկարողանա ինչ որ կոնկրետ արդյունքի հասնել հայկական բարեփոխումների և հայերի ու քրդերի միջև խաղաղության հաստատման հարցերում, առաջ դրանց արդյունքի վերաբերյալ իմ կանխատեսումները դրական չեն: Շատ կցանկանայի, որ Բարձր Դռանը բարի կամք դրսևորեր և, իրոք, լուծում սար այն հարցերին, որոնց դրական լուծմանը հայերն ավելի բան կասկածում են: Մյուս կողմից՝ շատ կցանկանայի, որ ամենօրյա դժվարությունների հաղթահարման ու ղայմարի գործում իր վստահաբուր գրասենյակի գործունեությամբ՝ Վեհափառը կարողանար այնդիսի նրբություն, դիվանագիտական այնդիսի հմտություն և համբերություն դրսևորել, որ բոլոր նրանք, ովքեր նրա այս կարճ այցելության ժամանակ շփվեցին նրա հետ, սխալ դուրս գային իրենց անարդար կանխատեսումներում, որոնցով Վեհափառին գուցակում էին կարճ ղաշտնավարում և Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների վատացում:

Գործիքի

ԻԱԳՆՊՐԱ, Քաղաքական շարք P 1891-1916թթ., թղթաղանակ 332:

95

Կոստանդնուպոլսում Իսալիայի դեսպանատան հանձնակատար Մոչենիզոն՝ Իսալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Կոստանդնուպոլիս, 23 նոյեմբերի 1913թ.*  
Հեռագիր  
թիվ 909

Գիրսի անունից Գուլկելիչը խնդրելով, որ այս հաղորդագրությունը գաղտնի ղահվի, ինչ ասաց, որ երեկ Գիրսի կողմից Բարձր Դռանը ներկայացված բա-

բեփոխումների հուճազիրը հիմնված է եղել արդեն հայսնի վեց կետերի և նախորդ չորեքաբքի՝ Գիրսի ու Մեծ Վեզիրի միջև համաձայնեցված նախագծի վրա: Մեծ Վեզիրը Գիրսին խնդրել էր թողնել այդ փաստաթուղթը, որդեսզի այն ֆննարկվի նախարարների խորհրդում, իսկ Պասասխանը խոստացել էր սալ վաղը: Գուլկիչն ինձ խոստացավ սեղյակ դահել իրադարձություններին: Չմերժեցի այս առաջարկը, ֆանզի Վանզենհայմը, չնայած ստացված կարգադրություններին, որի մասին խոսում եմ Ձեր թիվ 7600 հեռագրում,<sup>53</sup> խուսափում է թեմայի շուրջ մեզ հեճ ֆննարկումներից:

Այս նոր հուճագրի հիմնական էությունն այն է, որ բոլոր այն լիազորությունները, որ Բարձր Դուռը ցանկանում էր սալ գլխավոր վերահսկչին, սրվելու է խորհրդականներին՝ այդդիսով ադառովելով մեծ ճեռությունների վերահսկողությունը իրականացվող բարեփոխումների վրա:

Մոչենիզո

ԻԱԳՆՊԴԱ, Քաղաֆական շարք P 1891-1916թթ., թղթադանակ 332:

96

Կոստանդնուդուսում Իսալիայի դեստանասան հանձնակասար Մոչենիզոն՝ Իսալիայի արսաֆին գործերի նախարար Սան Ջուլիանոյին  
*Կոստանդնուդուս, 24 նոյեմբերի 1913թ.*

Հեռագիր  
 թիվ 910

